

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԵԾԻ ԴԱՍԲԱՐԱՆԻ ԵՎ ԱՃՅՈՒՆԻ ՏԵՂՈՐՈՇՈՒՄԸ.
ՆՈՐ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

ՔՐԻՍՏԻԱՆ ԹՅՈՒԹՅՈՒՆՋՅԱՆ ԴԸ ՎԱՐԴԱՎԱՆ (Փաբիգ)

Լևհ հնագետները հայտնել են իրենց ցանկությունը կում էլ-Դամասի շրջանում կիսատ թողնված ուսումնասիրությունները ավարտի հասցնելու վերաբերյալ: Տարիներ առաջ նրանք մեկ անգամ ևս անդրադարձել են այս հարցին շատ կարևոր, սակայն դժվար գտանելի մի հողվածով¹: Նրանց տեսակետը ամենատարբար թիչ ճանաչում է վայելում: Առավել ընդունված է այն վարկածը, որ արքայական դամբարանի մնացորդներ է տեսնում լատինական գերդամանատան ալեբաստրե քարազանգվածի մեջ²: Անառարկելի է սակայն, որ ոչ սրատմական, ոչ կրոնական և ոչ իսկ հնագիտական տեսանկյունից համոզիչ չի հնչում Դանիելի անունով մզկիթի առկայությունը Ալեքսանդրիայում: Պատմիչ Իբն ալ-Հարամի (798/799—871) կողմից նշված Ջուլ Կանայն մզկիթի և Նեբի Դանիել մզկիթի միջև կապը երբեք ձևակերպված չի եղել, ինչպես նաև այն դիտարկումը, ըստ որի ճանապարհորդների «մատուռը» այս կառույցներից մեկը կամ մյուսն է³: Բավարար չափով չեն բացատրված նաև այն ուղիները, որոնք հանգեցրել են Դանիելի և Ալեքսանդրի շփոթությունը միմյանց հետ: Աբու-Մաաշարի և Ալ-Ֆարդանիի լեզենդը փաստն է մատնանշում, բայց ոչ նրա պատճառները: Լուկման Իմաստունի շիրմի առկայությունը այս մզկիթի մեջ ոչ միայն մնացել է չբացատրված, այլև Սոմալի ուսումնասիրության ընթացքում համարյա անտեսվել է: Իսկ ինչ վերաբերում է այս անձնավորության առանձնահատուկ կապին Դանիելի, առավել ևս Ալեքսանդրի հետ, սույա այն երբեք չի դիտարկվել:

1993 թ. Բրեյտայի կողմից հրատարակված Նեբի Դանիել մզկիթի հատակագծում⁴ դամբարանի գիրքը չի մատնանշվում: Այնտեղ չեն նշված նաև Դանիելի և Լուկմանի վերագրվող գերեզմանների դիրքերը, առավել ևս դրանց մոտ գտնվող ջրամբարի տեղը: Իտալացի հնագետի կողմից մզկիթում տարված աշխատանքները շարունակելու միակ ճանապարհը այնտեղ գնալ և խրոնոլոգիա ստանալու դամբարանի իջնելն էր: 1993 թ., Հին Ալեքսանդրիայի տեղագրության վերաբերյալ իր հետաքրքրական թեզում⁵ Բարբարա Տկաչովը անդրադարձել է նաև մզկիթի 1958 թ. Լեչչեկ Դաբրովսկու կողմից առաջարկված

¹ W. Dązewski. Notes sur la trame urbaine de l'ancienne Alexandrie.—Compte Rendus de l'Académie des Inscriptions et Belles Lettres, 1994, Avril-Juin (Fasc. II), p. 423—429.

² K. Michalowski. Rapport sur la prospection du terrain dans la région de la mosquée Nabi Daniel—Alexandria University Bulletin of the Faculty of Arts, 1958 № 12, p. 37.

³ Տե՛ս Le Monde, 5 նոյեմբերի, 1997, Ալեքսանդրիայի համալսարանի պրոֆ. Ալ-Ֆախարանի (Al-Fakharany) տեսության վերաբերյալ հայտարարության մասին:

⁴ «The Mosque Dul-karnein, situated near the Gate of the City [Alexandria] and its exit» (տե՛ս P. M. Fraser. Ptolemaic Alexandria, 1972, II, p. 36(86).)

⁵ Տե՛ս H. (de) Vaujany. Alexandrie et la Basse-Egypte. Paris, 1885, p. 111—112.

⁶ E. Breccia. Les sondages pres de la Mosquée Nabi Daniel et ceux de la Rue El Bardissy.—Le Musée Greco-Romain d'Alexandrie, 1931—32. Bergamo, 1933, p. 48—52.

⁷ B. Tkaczow. Topography of Ancient Alexandria (An Archaeological Map).—Travaux du Centre d'Archéologie Méditerranéenne de l'Académie Polonaise des Sciences, 1993, № 32, p. 89—93, fig. 28(37).

Հատակագծին, ուր մատնանշված է ոչ միայն դամբարանը, այլև ճշտված է մոտակա հայտնի ջրամբարի դիրքը: Դամբարանի վրա հատակագծի հրատարակված չի եղել, քանի դեռ Տկաչովը դրան չի անդրադարձել իր դիտարկումներում⁸: Քանի որ Լեհաստանում տպագրված այս աշխատությունը դեռևս նոր է սկսել տարածվել, մենք, 1996 թ. մայիս ամսին գտնվելով Ալեքսանդրիայում, դեռ չէինք հասցրել ծանոթանալ դրան, երբ Ալեքսանդրիայի իսլամական հնությունների բաժանմունքի տնօրեն ղոկտ. Մուհամմեդ Աբդել Ազիզ Կեհեմի միջամտությամբ հնարավորություն ստացանք այցելել ներքին Դանիելի մզկիթի դամբարանը: Վերջնելով չորս-հինգ մետրանոց մի աստիճան, մեզ շարք անձանց ուղեկցությամբ⁹, իջանք դամբարանի փոսը: Այն շրջապատված էր փայտե բաղրիքով, այնտեղ էր գտնվում նաև մզկիթի կենտրոնում տեղադրված մատուռը:


Դամբարանում շատ խավար էր, այն լուսավորվում էր միայն անմիջապես իր վերևում գտնվող մամլուքյան մի հին գմբեթից ներթափանցող լույսով: Դամբարանը խաչաձև էր, սակայն հարավ-արևմտյան մասում նրան երկարավուն ձև են հաղորդում կամարաձև առաստաղով իրար հաջորդող չորս սրահներ: Հնում այս սրահները իրենցից ներկայացնում էին ներքին Դանիելի փողոցից դեպի դամբարան տանող անցումը: Թեթևություն ունեցող հին մուտքը, որը ժամանակին միանում էր մոտ տասներկու աստիճան ունեցող սանդուղքին (որի մասին հիշատակում է Մահմուդ Փաշան), այժմ արդեն չի գործում¹⁰: 3X3 մ չափեր ունեցող երեք քառակուսի սրահները հատակագծի վրա ներկայացնում են դամբարանի խաչաձև հատակագծի ճյուղերը: Հարավ-արևմտյան սրահի հարավ-արևելյան պատի մեջ փորված է մի միհրաբ: Բաղմիդս նկարագրված սալահատակը կամ փայտե հատակը Բրեչիայի պեղումներից հետո այլևս գոյություն չունի: Դրա տեղում 15 սմ-ից ավելի հողի շերտ էր, որը տեսանելի էր միայն դեպի դամբարանի հյուսիս-արևմուտքում տեղադրված ջրամբարը տանող հորի վրա խոնարհվելու դեպքում: Ներքևում, հյուսիս-արևմտյան աբսիդի հյուսիս-արևմտյան պատի ներքևի աջ կողմում բացված մի փոքրիկ դռնակից կարելի էր տեսնել ուղղանկյուն մի սրահ, որը փորված էր խոր հորի միջից: Այս հորի խորքում փոքրիկ սենյակ կա, ուր չորս կամարներ գալիս, միանում են կենտրոնական սլանը. սա փաստորեն հուշում է, որ այս տարածքը ժամանակին որպես ջրամբար է օգտագործվել:

Դանիելի ուղղանկյունաձև գերեզմանի տակ եղած խոնավ հողը տեղ-տեղ ծածկված է արհեստական նյութից հյուսված խաիրներով: Իրականում գերեզման կոչվածը կանաչ ծածկոցով, փայտե ներկված տուփ էր, որն ուղղված էր հյուսիս-արևմուտք՝ հարավ-արևելք՝ դեպի Մեքքա: Զարդանախշ արձանագրությունը նշում էր, որ Աստծուց բազի այլ աստված չկա և որ Դանիել մատուցարեն հանգում է այստեղ: Երկու-երեք մետրի վրա, դեպի փողոց տանող կամարակապ չորս սրահներից առաջինի հյուսիս-արևմտյան պատի երկայնքով դրված էր իսլամական ոճի փայտե մի կարասի, որը ծածկում էր լուսմանի գերեզմանը: Իրականում դա մի քառակուսի մաստաբա էր, որն իր հյուսիս-արևմտյան մասում գտնվող մի ելուստով ցույց էր տալիս հանգուցյալի գլխի ենթադրյալ տեղը: Առաջին և երկրորդ կամարակապ սրահների միջև գտնվող երկու աստիճանների վրա արաբերեն գրքերով լի մե ճամպուրկ կար: Ավելին և իսլամական դարդարանախշերով կահ-կարասու մե ռանի մնացորդներ էին դրված պատի երկայնքով. խավարի մեջ: Դամբարանի պատերը ծածկված էին ծեփով և տեղ-տեղ դարձարված կանաչ ներկի մի քանի շերտով: Ի դեպ,

8 Տկաչովի անձնական հաղորդումից:
 9 Գիտական անձնակազմը բաղկացած էր եգիպտացիտ Վ. Ասենոի Ամորոսից, իսլամագետ և պրոֆ. Ա. Ազիզի ասիստենտ Ա. Ի. Ահմադից և հեղինակից: Տեխնիկական անձնակազմը՝ ֆոտոնկարիչ Պ. Լանգմանից և մի թարգմանչից:
 10 M. Al Falaki. Memoire sur l'antique Alexandria, ses faubourgs et environs decouverts: par les fouilles, sondages, nivellements et autres recherches faits d'apres les ordres de Son Altesse la Khedive d'Egypte, Copenhague, 1872.

մենք նշմարեցինք, որ առաջին և երկրորդ սլաքակամարածև սրահների հյուսիս-արևմտյան պատերը վերականուցված էին կարմիր աղյուսով՝ տպավորություն թողնելով, որ որոշ խորշեր փակված են:

Ների Դանիելի մզկիթն ու նրա դամբարանն այցելող ցանկացած հնագետ մի քանի ընդհանուր կարող է հասկանալ, որ Բրեչիան այստեղ կատարել է ոչ լին պեղումներ, այլ պարզապես զոնդած և, համաձայն իր զեկուցագրի, միայն դամբարանի խորքում: Շատ արագ կարելի է ըմբռնել, որ այս «պեղումները» բառարար հիմք չեն տալիս վերջնականապես հերքելու այն տեսակետը, ըստ որի սզկիթը կառուցվել է Սոմային կամ Ալեքսանդրի գերեզմանին ուղղահայաց, ինչպես այդ մասին նշել են Գրենդորը¹¹, Ադրիանին¹², Բենհարդը¹³: Պատճառները հետևյալներն են.



1. Դանիելի գերեզմանը, 2. Լուկմանի գերեզմանը, 3. կարմիր աղյուսից պատերը, 4. Դեպի փողոց տանող ուղին:

Ա) Բրեչիայի՝ ջրամբարի խորքից դեպի «արևելք» կատարած զոնդավոր չափազանց մակերեսային է մզկիթի տակ անտիկ հիմքի առկայությունը հնարավորությունը ժխտելու համար:

Բ) Ջրամբարի հատակը գտնվում է դամբարանի հատակից 10,6 մետր խորություն վրա, ինչպես այդ մասին ասում է Բրեչիան, ուստի այդ զոնդավոր 1) շատ խորն է Դանիելին վերագրվող գերեզմանի համեմատությամբ և 2) տեղաշարժված է դեպի հյուսիս-արևմուտք նվազագույնը երեք մետրի չափով: Բրեչիան հավանաբար գոհացել է միայն ջրամբարի միջնորմը քանդելով, վրստահանելու համար, որ այն չի շարունակվում:

Որևմն, ների Դանիելի մզկիթի դամբարանը պեղված չի եղել Բրեչիայի կողմից: Այսինքն, պարզ ասած, Դանիելի գերեզմանը կրող հողի զանգվածը, որն անմիջականորեն ուղղահայաց է կենտրոնական քառակուսուն և նրա կողքերին պտնվող երեք թիերին, ուսումնասիրված չէ: Ուստի, Մաքս դը Զոդերը¹⁴:

¹¹ P. Graindor. Chronique d'Égypte, 1935, p. 279.

¹² A. Adriani. Sondages dans la prétendue région de la necropole royale.—Annales du Musée gréco-romain 1935—1939, 1940, p. 54—64.

¹³ M. L. Bernhard. Topographie d'Alexandrie. Le tombeau d'Alexandre et le Mausolee d'Auguste.—Revue Archeologique, № 47, 1956, p. 129—156.

¹⁴ A. Zoghbe (comte de). Etude sur l'ancienne Alexandrie, 1909, p. 169.

ինչպես նաև իշխան Օմար Թուսունի¹⁵ վարկածները, ըստ որոնց Դանիելի ամ-
յունը հենց Ալեքսանդրի աճյունն է, չեն ստուգվել: Չի ստուգվել նաև «Դա-
նիելի» ստորգետնյա գերեզմանի գոյությունը, ոչ իսկ նրա տիրոջ ինքնությունը
վերջինիս ամուսնի դեռևս այստեղ գտնվելու իմաստով: Անտիկ շրջանի ավե-
րակների առկայությունը կամ բացակայությունը դեռ պետք է պարզվի: Կարող
էին գոյություն ունենալ «հիմքերի այլ գծեր» կրաքարե մեծ բլուկներով», ինչ-
պիսիք են Բրեչիայի հայտնաբերածները մզկիթի դրսի կողմում նրա կատա-
րած B զոնդածի ընթացքում, և կամ Դաշևսկու կողմից քիչ ավելի հեռու
հայտնաբերված փլատակները: Ամեն դեպքում ակնհայտ է, որ Բրեչիան դամ-
բարանի ներսում պեղումներ չի կատարել, այլ միայն դամբարանից դուրս:
Հատակագծի վրա ցույց է տրված, որ նշված A, B, C գետնուղիները փորված
են մզկիթի արտաքին կողմում, այսինքն դամբարանից հեռու, իսկ ջրամբարը
նույնպես դամբարանին կից արտաքին կողմում է¹⁶:

1958 թ. պրոֆեսորներ Կազիմիր Միխայլովսկին և Ֆաուզի Աբդել Ռահ-
ման ալ-Ֆախարանին, ինչպես նաև հնագետ Լեշչեկ Դաբրովսկին Ալեքսանդ-
րիայի համալսարանի բանասիրության ֆակուլտետի «Տեղեկագրում» (Bulletin
de la Faculté des Lettres de l'Université d'Alexandrie) որոշեցին հրատա-
րակել Դանիելի մզկիթում կատարած իրենց ընդհանուր հետազոտությունները:
արդյունքները, առանց որոնց անհնար է հետևություններ անել մզկիթի մա-
սին: Չկարողանալով դյուրություններ ձեռք բերել այս հրապարակումները,
ստիպված եղանք դիմել Լեհական Միջերկրածովյան հնագիտական կենտրո-
նին, որը սիրահոծար կերպով մեզ ուղարկեց Միխայլովսկու հոդվածը: Ինչ մե-
րաբերում է Դաբրովսկու հոդվածին¹⁷, պարզվեց, որ նույնիսկ Վարչավա-
լում դրա պատճենը չունեն և քանի որ Բարբարա Տկաչովը դրան ծանոթացել
էր Հունա-հռոմեական թանգարանի գրադարանում, ուստի մեզ հայտնեց հու-
վածի բովանդակությունը: Հետևյալ կարճ նշումներից երևում է, որ Միխա-
յլովսկին ևս ամենևին լավարարված չէր Բրեչիայի ղեկուղագրից. «Պրն. Բրե-
չիան այստեղ իսկապես տեսել է մի հին ջրամբար [...] բայց նա չի տվել
ալը հուշարձանի նկարագրությունը, ինչպես նաև խուսափել է թվագրել դրա
կառուցման ժամանակը»¹⁸: Ներքևում նա ավելացնում է. «Հարցը միայն Ալեք-
սանդր Մեծի գերեզմանի այդտեղ գտնվելը պարզելու մեջ չէ»:

Այս նախադասությունը մատնում է առաքելության իրական նպատակնե-
րը, նույնիսկ եթե դրանք դրված էին ամենաառողջ հետաքրքրասիրությամբ:
Իրականում կարևորը լիճ հնագետի եզրահանգումներն են, ըստ որոնց. «Պրն.
Բրեչիան ջրամբարի պատին հրկու անցք է բացել: Նա նաև պեղումներ է կա-
տարել ջրամբարին կից հյուսիս-արևելյան պատի ետևում: Վերոհիշյալ ղե-
կուղում նա մատնանշում է իր զոնդածի ընթացքում հայտնաբերած պտղո-
մեոսյան պատերը: Ներկայումս ալը պատերը ծածկված են փլատակներով և
հողով: Միխայլովսկին ալը մերժին նախադասությամբ անդրադառնում է B
գետնուղու կրաքարե մեծ բլուկներին: Նա շարունակում է. «Ես համոզված եմ,
որ ներքի Դանիելի: մզկիթի ողջ տարածքը կրկին պետք է լինի հնագիտական

15 E. Breccia. Les Sondages près de la Mosquée Nabi Daniel et ceux de la Rue El Bardissy.—Le Musée Greco-Romain d'Alexandrie, 1931—32, 1933, Bergamo. p. 47.

16 Ինչպես ասում էր Ֆրենգորը Բրեչիայի պեղումների մասին, սակայն հակասելով իր հիմ-
նական եզրակացությանը. «Ջրհորների տեսքով փորված փոսերը բավարար չեն: Մենք այդ դի-
տեսն մեր փորձից՝ Հունաստանի անավարտ պեղումներում և կրկին անգամ եղելան ձողում
իրար շատ մոտ գտնվող ջրհորների տեսքով բազմաթիվ զոնդածները հաղիվ մի բանի սանտի-
մետրի տարրերով: իմ նախորդին, որը պակաս հաջողակ էր գտնվել, թույլ չէին տվել
հայտնաբերել այն, ինչ հաջողվեց ինձ»:

17 L. Dabrowski. La citerne d'eau sous Nabi Daniel.—Alexandria University
Bulletin of the Faculty of Arts, XIII, p. 40—43.

18 K. Męchowski. Rapport sur la prospection du terrain dans la région de la
mosquée Nabi Daniel.—Alexandria University Bulletin of the Faculty of Arts, XII, 1958,
p. 37.

մեխոգիկ ուսումնասիրման առարկա, հատկապես (sic) սուլթանների գերեզմանների հնում զբաղեցրած տարածքը: Վերոհիշյալ մզկիթի հարավ-արևմուտքուս առ գերեզմանների տեղանքը մինչ այսօր ուսումնասիրված չի եղել [...]: Ահա թե ինչու, իմ կարծիքով, հնագիտությունը պետք է օգտվի այն բացառիկ, բայց անցողիկ իրադրությունից, որը ստեղծվել է սուլթանների գերեզմանների անհետացման հետևանքով և հնարավորին շափ արագ կազմակերպի այս շատ կարևոր տարածքի մեթոդական պեղումները»:

Կարճ ասած, Միխայլովսկու հետազոտության առարկան Սոման է, և ոչ թե Զոգլեի և Թուսունի որոնած Մակեդոնացու աճյունը: Ինչ վերաբերում է Վիկտոր Դաշևսկու առաջարկին, որ նա արել է 1994 թ. հունիսին Բանասիրության և Հնագրության ակադեմիայում (Academie des Inscriptions et Belles Lettres), ապա նա համամիտ է Կադիմիր Միխայլովսկու հետ: Վերջինս յոթնամյա պահանջներով 80 տարեկան հասակում, 1981 թ.՝ երկար և փայլուն գործունեությունից հետո, որը, սակայն, այդպես էլ նրան հնարավորություն չտվեց իրականացնել նեբի Դանիել մզկիթի տարածքում պեղումներ կատարելու իր ցանկությունը: Միխայլովսկու գլխավորած արշավախմբի աշխատանքներից բերում ենք ջրամբարի թվագրման վերաբերյալ կարևոր մի տեղեկություն. «Մենք հանգամանորեն քննեցինք կրաշաղախը և անջրաթափանց (wasserdichterputz) ցեմենտի մասնիկները, որոնք ծածկում են այդ ջրամբարի պատերը: Դրանք կառուցված են անհամաչափ տեղադրված կրաքարի բլոկներով և թրծված աղյուսով ու իրար հետ ամրացված ցեմենտի հաստ շերտով: Այս դիտարկումը, ինչպես նաև հավանաբար II դարի վերջի հռոմեական սյունների առկայությունը, որոնք այստեղ կրկնակի անգամ են օգտագործվել կամարների կառուցման ժամանակ, մեզ բավականաչափ տվյալներ են հաղորդում հուշարձանի թվագրելու համար:

Պետք է նկատի առնել նաև այն հանգամանքը, որ սյունն իր ամենաստորին հարթությունից անջատվել և մահմեդական նոր ժամանակաշրջանին բնորոշ ձևով տեղադրվել է վեռոգոնալ բազալի վրա:

Ուստի ես հակված եմ հավատալու, որ գործ ունենք մի կառույցի հետ, որի ամենավաղ թվագրումը բյուզանդական ժամանակաշրջանն է, ոչ առաջ, րան IV դարի վերջը, և որը վերակառուցվել է հետագայում՝ մահմեդական շրջանում»:

Ուստի «ջրամբարը» պետք է որ լինի քրիստոնեական շրջանից, II դարի տարրերով, վերակառուցված հետագայում՝ մահմեդական ժամանակաշրջանում: Խաչածև-հատակագիծը դա հաստատելու ևս մի փաստարկ է: Նորակառույց մզկիթները սովորաբար բավարարվում են քառակուսի հատակագծով, ուր տեղադրվում է միհրաբը: Խաչածև-հատակագիծը նման է Իտալիայի Ռավեննայում գտնվող Գալլա Պլասիդիայի վաղքրիստոնեական դամբարանի հատակագծին, որը թվագրվում է V դարով, և կամ սիրիական այնպիսի մատուռ-հուշարձանների հատակագծերին, ինչպիսիք են Սուրբ Բաբելասինը (IV դար.) Անտիոք-Կառուսիեում, կամ Կալաթ-Սիմանինը (V դար)¹⁹:

Լևոն Աֆրիկացու²⁰ տեքստի հիմնական տերմինները, որոնք հանդիպում

¹⁹ R. Krautheimer. Early Christian and Byzantine Architecture, 1965.

²⁰ «Զմոռանանք նշել, որ քաղաքի կենտրոնում, սվերակների մեջ ցածր մատուռի նման մի տնակ կա, որտեղ մահմեդականների կողմից շատ պաշտված ու հարգված մի շիրիմ է գտնվում, ուր լույսը վառած են սլահում գիշեր-ցերեկ: Ասում են, որ սա Ալեքսանդր Մեծի շիրիմն է, որը, Ղուրանում, Մուհամմեդի իրենթության շնորհիվ մարգարե և թագավոր դարձավ: Շատ օտարերկրացիներ ևս գալիս հեռավոր երկրներից այս շիրիմը տեսնելու և իրենց ջերմեռանդությունը մատուցելու: Նրանք այստեղ նշանակալից շափերի հասնող նվերներ էին թողնում»: Թարգմանությունը՝ A. Epaulard [Jean Leon l'Africain, Description de l'Afrique, 1517 (1980), Paris].

են նաև Մարմուխի²¹, Սանդիսի²² և այլ ճանապարհորդների մոտ, հետևյալներն են. «բաղաքի կենտրոն», «ավերակների կենտրոն», «ցածր տնակ», «մատուռ», «շիրիմ», «պաշտված և հարգված», «լույսեր», «գերեզման», «Alexandre'Is-candre», «սարգարե», «Ղուրան», «օտարագրիներ», որ պետք է հասկանալ «ուխտագնացներ» իմաստով (սա առկա է նաև Մորերիի մոտ)²³, այսպիսով «բարեպաշտություն» և «ոգորմություն»: Ալեքսանդրի անվան հետ կապված որևէ բացատրական հիշատակություն չլինելու պարագայում որևէ տեքստ, ուր հիշատակվում են բոլոր այս տարրերը, կարող է կապ հաստատել ճանապարհորդների «մատուռ» և նեոսի Դանիել մզկիթի միջև: Այդպիսի տեղում բնակություն ունեցող ներքին Դանիել մզկիթի պատմության այն նկարագրությունները, որ շեյխ Իբրահիմ-էլ-Բուրուլլուսին արել էր Անրի դը Վոթանիին, իսկ վերջինս գրի է առել 1885-ին: Այն երբեք համեմատության մեջ չի դրվել XVI—XVII դարերի ճանապարհորդների գրառումների հետ.

«Ներքին Դանիելի մզկիթը ժամանակին հրեաների, քրիստոնյաների և մահմեդականների կողմից պաշտամունքի մեծ առարկա է եղել. այստեղ հրապարակային աղոթքներ են արվել նեղոսի բարեհաջող վարարման համար. ինչպես շեյխ Կահիրեում գտնվող Ամրի մզկիթում՝ հոգևոր երեք միաբանությունները դեկավարները այս առիթով հավաքվել են դեպի Երկինք ուղղելու իրենց աղաչանքները: Մաղրբերի ուխտավորները, լիբիական անապատում իրենց ճանապարհորդությունը սկսելուց առաջ, երբեք չէին զրանում այցելել մարգարեի շիրիմ-մատուռը և մատուցել իրենց ուխտի նվիրատվությունը (ex-voto): Այսօր համատարացյալների ցերեկանաղոթությունը շատ է նվազել. դամբարանը և մզկիթը հազիվ են խնամվում և եթե հուշարձանը չի վերվում, դա միայն Սաիդ Փաշայի ընտանիքի առատաձեռնության շնորհիվ է»²⁴:

Ներքին Դանիելի մզկիթի մասին այս տեղեկությունները ուրիշ ոչ մի տեղ չեն հրապարակվել: Հազվագյուտ են նաև այն մասնագետները, որոնք նեղություն են կրել կարգալ վոթանի երկր: Սակայն Անրի դը Վոթանին ամենևին չի վկայակոչում Անրի կամ ճանապարհորդներին, մեջբերելով միայն այն. ինչ շեյխ Իբրահիմ-էլ-Բուրուլլուսին նրան պատմել է մզկիթի պատմության մասին, իր այցելության օրը: Ինչպես՝ շտեմանել կապը այս նկարագրության և որոնվող մատուռի միջև: Ի՞նչ ասել այն մաղրբեցիների մասին, որոնք «ժամանակին» (նախորդ դարում), լիբիական անապատն անցնելուց առաջ, գալիս էին մարգարեի հետ հաղորդակցվելու: Եթե մենք չենք ուզում այդտեղ տեսնել Սիվայում Ալեքսանդրի նավարկության մասին հիշողություն, ապա այդ մանրամասնը զուգահեռություն է ի հայտ բերում: Ինչ վերաբերում է վարարմանը նվիրված աղոթքներին, այս ամենևին էլ անակնկալ չէ, որ որևէ մեկը այստեղ էին արվում: Ինչպես ցույց են տալիս Պիեռ Բելոն դը Մանի²⁵ (1546), կամ դր ժամանակի²⁶ (1657) քարտեզները, ջրերը մտնում էին Վեդոսի դար-

21 «En medio de la ciudad entre las ruynas de los edificios esta una casa pequena a manera de templo, y dentro della un sepulchro que honran mucho los setarios, porque dizen [qu]esta en el cuerpo de Alexandro Magno, a quien llaman Escander, y le reverencian como a profeta. y rey, y hazen mencion del en su alcoran, y muchos forasteros de lexos tierras van a visitar, y hazer reverencia a este sepulchro»—In: Marmol Cariaval. L. 1599. Description general de Africa, donde se contiene las provincias de Numidia, Libia, la tierra de los Negros, la baxa y alta Etiopia y Egipto. Malaga. Libro XV, fo CVII, col. I.

22 G. Sand y s. Voyages en Egypte, 1611, I.F.A.O., Le Caire, 1973, p. 87.

23 Քաղաքի կենտրոնում մահմեդական մի մատուռ կա (Turbè), որին թուրքերը Սկենդեր (Ալեքսանդր) են կոչում և պնդում են, որ Ալեքսանդր Մեծը այստեղ է թաղված: Թուրք ուխտավորները մեծ խմբերով են գալիս այստեղ, որովհետև Ղուրանում նշվում է այդ մասին (L. Morel. Grand Dictionnaire Historique, 1717, I, p. 117).

24 H. (de) Vaujan v. Alexandrie et la Basse-Egypte. Paris, 1885, p. 112—113.

25 P. Belon du Mans. Voyage en Egypte de Pierre Belon du Mans, 1547.

26 J. Jansson. Atlas Illustriorum Hispaniae urbium tabulae cum appendice cele-

պաս» կողմող հարավային դռնից և լցնում էին այն հարյուրավոր ջրամբարները, որոնց վրա կառուցված է եղել քաղաքը անտիկ շրջանում: Սա այն դարպասն է, որը գտնվում է ներքի Դանիել մզկիթից երկու քայլ հեռավորության վրա: Դարպաս, որը գտնվում է Զուլ Կաննայն «մզկիթից» երկու քայլ հեռավորության վրա, որի մասին նշում է արաբ հեղինակ Իբն Աբդ ալ-Հարամը, որը ամեն ինչ չէ, որ մեզ հաղորդել է:

Ֆրեզերը²⁷ հետևյալ ձևով է վկայակոչում Իբն Աբդ ալ-Հաբամին. «Առաջին հերթին կարող ենք նշել մ. թ. 871 թ. արաբ պատմագիր Իբն էլ-Հաբամի մի հատվածը, ըստ որի քաղաքի մզկիթներից մեկը՝ Դուլ-Կաննայն անունով, գտնվում է քաղաքային դարպասների մոտ՝ ելքի կողմից» (p. 484, traduction Bouriant, «Mem. Miss. arch. franc.», XVII. I (1893)):

Հրատարակության թվականը սխալ է: Բուրիանը հրատարակել է իր աշխատությունը 1895 թ.²⁸ և ոչ թե 1893-ին: Բուրիանի թարգմանած աշխատությունը Իբն Աբդ ալ-Հաբամինը չէ, այլ Մաբրիզիինը (IX դար), որն իր մեջ Իբն Աբդ ալ-Հաբամից, ինչպես նաև այլ արաբական աղբյուրներից հատվածներ է ներառում: Մենք նկատեցինք նաև, որ Ֆրեզերի մեջբերած հատվածը 484 էջում չի գտնվում, ոչ էլ նախորդ կամ հաջորդ էջերում, որոնք տող առ տող ստուգվել են մեր կողմից: Դժվար է հասկանալ, թե անգլիացի էրուդիտը ինչպե՞ս կարող էր թույլ տալ այս վրիպումները: Ուստի Ալեքսանդրի գերեզմանի որոնման հարցում կարևորագույն վկայությունների առկայության պայմաններում կանգնած լինելով անտրամաբանություններին դեմ-հանդիման, որոշեցինք մեկ անգամ ևս թարգմանել տալ տեքստի բնագիրը արաբերենից²⁹: Ատուցված թարգմանությունը ոչ միայն տարբեր է Ֆրեզերի կողմից ներկայացվածից, այլև պարունակում է մեծ կարևորություն ունեցող անտիպ տեղեկություններ.

«Ալեքսանդրիայում կա հինգ աղոթարան. Մովսեսի աղոթարանը փարոսի մոտ՝ եկեղեցու կողմը. Սողոմոնի աղոթարանը: Դհուլ Կաննայնի կամ ալ-հադիրի աղոթարանը՝ խաղաղություն իջնի նրանց երկուսի վրա, այն գտնվում է ծածկած շուկայում՝ ակացիա-միմոզաների հարևանությամբ. ալ-հադիրի կամ Դհուլ-Կաննայնի աղոթարանը, որը գտնվում է քաղաքային դարպասի էլքի մոտ. յուրաքանչյուրին մեկ աղոթարան, բայց չգիտենք, թե որտեղ է գտնվում Ամր բեն ալ-Ասի մեծ աղոթարանը»³⁰:

Այս նոր թարգմանություն մեջ զարմացնում է ալ-հադիր մարզարեի անվան հիշատակությունը, որը Զուլ Կաննայնի հետ միասին է դրված Իբն Աբդ ալ-Հաբամի տեքստի մեջ և փոխարինում է նրան: «Ալ-հադիր»-ին կամ «ալ-հիդր»-ին առնչվող պատմություններն ու առասպելները, ասում է Ռենցը³¹, կապված են Ղուրանի XVIII սուրայի հետ³²: Այսինքն, ըստ Զուլ Կաննայնի

briorum alibi aut olim out nume parentium Hispanis aut eorum Civitatum commercis florentium. Amstelodami, 1657.

²⁷ P. M. Fraser. Ptolemaic Alexandria. 1972. II. Notes. P. 36. Notes 86. § 1.

²⁸ M. U. Bouriant. Magrizi. Description Topographique et Historique de l'Egypte.— Mem. Miss. arch. franc., XVII, 1895. I.

²⁹ Մենք շնորհակալություն ենք հայտնում Collège de France-ի տեքստերի պատմության ուսումնասիրման ինստիտուտի (I.R.H.T./C.N.R.S.) ուսումնասիրությունների ղեկավար դոկտոր Տուստֆ Ռադերին մեզ վստահեցնելու համար, որ առայժմ Իբն ալ-Հաբամի «Futuh Misr»-ը ոչ մի եվրոպական լեզվով չի թարգմանվել: Այս մասին նշում է նաև Իսլամի հանրագիտարանը: Այս եզրակացությունը հաստատում է նաև Մարի Ժյունրվիել Գեդոնը Ազգային գրադարանի արևելյան ձեռագրերի բաժանմունքից:

³⁰ C. C. Torrey. Ibn 'Abd al-Hakani. Futuh. Misr. New Haven, 1922. p. 41, Traduction Youssef Ragheb.

³¹ G. Renz. Al-Khadir. Encyclopédie de l'Islam. 1978, IV, p. 935—939.

³² «Они спрашивают о Зу-л-карнаине. Скажи: «Я прочитаю вам о нем воспоминание». Мы укрепили его на земле и дали ему во всему путь, и пошел он по одному пути.

սուրայի, որն արդեն կապ է հաստատում այս երկու անձնավորությունների միջև և, բառիս լալն իմաստով՝ Ալեքսանդրի հետ, քանի որ ըստ Ղուրանի ավանդության Ձուլ Կառնայնը «երկեղջյուր» Ալեքսանդրն է³³:

Ըստ ալ-Խադիրի լեզենդի, շարունակում է Ռենցը, Մուսան (Musa) իր սպասավորի հետ մի ճանապարհորդություն է ձեռնարկում մինչև Մաջմա ալ-բա՛հրայն կոչվող վայրը. ալ-բա՛հրայն ըստ ենթատեքստի նշանակում է երկու ծովերի կամ երկու գետերի միացում: Երբ նրանք հասնում են այդ վայրը, նկատում են, որ իրենց տեղափոխած ձուկը սաճում, իջնում է ջրի մեջ և ինչո՛ր սատանայական կախարդանքով անհետանում, Փնտրելով, Մուսան նրա փոխարեն Աստծո մի սպասավորի է գտնում, որին խոստանում է հետևել, եթե ձշմարիտ ճանապարհը ցույց տա իրեն: Ասպասավորը պատասխանում է, որ Մուսան ոչ մի դեպքում բացատրություն չպիտի սլահանջի իրենից, եթե չհասկանա իր արարքները: Ապա առասպելը հանգամանորեն անդրադառնում է այն իրադարձություններին, որ ուղեկցում էին նրանց նավարկության ընթացքում, քանի դեռ չէին բաժանվել իրարից: Եթե Ղուրանի մեկնաբանները միասնական չեն ի դեմս այս Մուսայի տեսնելու աստվածաշնչյան Մովսեսին, ապա մեծ մասը համամիտ են ալ-Խադիրին ընդունել որպես նրա սպասավորը: Ուրիշներն, ընդհակառակը, ալ-Խադիրին համարում են Մուսայի հայտնաբերած Աստծո սպասավորը: Ռենցն ավելացնում է, որ այս առասպելը ծագում է նախաիսլամական երեք տեքստերից՝ շումերա-բաբելոնյան Գիլգամեշ էպոսից, հրեական մի առասպելից և «Ալեքսանդրի Վեպից»: Արդ, ընդգծում է Ռենցը, Ալեքսանդրի Վեպը շատ ավելի մոտ է Ղուրանական առասպելին, մասնավորապես նրա ասորական տարբերակում, ուր Ալեքսանդրը Անդրեասի՝ իր սպասավորի ու խոհարարի հետ միասին կյանքի աղբյուրն է որոնում: Խավարի աշխարհով իրենց դժվարին ճամփորդության ժամանակ, մի օր Անդրեասը աղբյուրի մոտ ձուկ էր լվանում, վերջինս ջրի հետ շփման մեջ մտնելով կենդանանում և փախչում է: Անդրեն նետվում է այդ հրաշագործ ջրի մեջ և անմահություն ձեռք բերում, սակայն իր տիրոջ վերադարձին չի կարողանում գտնել նույն աղբյուրը: Ալեքսանդրը գրկվում է անմահությունից, մինչդեռ խոհարարը չգիտեր թե ինչ աներ այն:

Իր ծանոթագրության մեջ Ռենցը բացատրում է, որ Ղուրանի ավանդույթներից շեղվող մի ճյուղ առանձնացնում է ալ-Խադիրի և կյանքի աղբյուրի որոնման համար Ալեքսանդրի կատարած ճամփորդության կապը: Ներդրություն խնդրելով, որ չի կարող ավելի խորանալ այդ ավանդության մեջ, նա սակայն ճշգրտում է, որ այդ աղբյուրները ցույց են տալիս, որ իրենք անկախ են Ղուրանից, ոչ միայն այն պատճառով, որ իրենք ալ-Կադիրին համարում են Ձուլ Կառնայնի ընկերակիցը, այլև քանի որ Ղուրանական fata-ի հետ ոչ մի աննչություն չեն գտնում: Եթե ամփոփենք, ալ-Խադիրը միաժամանակ Ալեքսանդրի և Ձուլ Կառնայնի ուղեկիցն էր. միանգամայն ընդունելի է, որ Ձուլ Կառնայնը «երկեղջյուր» Ալեքսանդրն է³⁴: Իբն Աբդ ալ-Հաբա՛սի մուսու-

А когда он дошел до заката солнца, то увидел, что оно закатывается в источник зловонный, и нашел около него людей

Мы сказали: «О Зу-л-карнайн, либо ты накажешь, либо устроишь для них милость». (Коран, перевод и комментарии И. Ю. Крачковского. М., 1986. Сура 18, 82—85. стр. 249).

³³ Dhu L. Karnayn, Du-l-karnein, Du-l-Qarna in, Dhou al Qarna in, Z. ul Qarnayn, ստուգաբանություններն ու տառադարձությունները նույնքան տարբեր են հին կամ նոր աղբյուրներում, որքան այն ձևերը, որոնցով թարգմանվում է այս անվանումը. «Երկու եղջյուր ունեցող Տերը», «Երկեղջյուր», «Երկու եղջյուր ունեցող անձնավորությունը», «Երկու եղջյուր ունեցող տերը (արքան)» կամ «Երկու եղջյուր ունեցող մարդը»:

³⁴ Թարգմանիչը մեր ուշագրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ արաբերեն «miasjid» արտահայտությունը այս կոնտեքստում նշանակում է ոչ թե «մզկիթ», այլ «աղոթարան»: Այս սինրն նա խոսում է ավելի փոքր շափեր ունեցող կառույցի մասին, ուր ուրբաթ օրվա աղոթքը չի կատարվում: Վերջիններիս մասին խոսելիս, ավելի շուտ ասում են «ջամի»: Անմիջապես

անակնկալն այն է, որ նրա կարծիքով նույնացված անձնավորություններ Զուլ Կառնային և ալ-Նադիրին նվիրված ոչ թե մեկ, այլ երկու ազոթարան կա: 'Ին ավելին, այս երկրորդ ազոթարանը գտնվում էր ակացիա-միմզաների մոտ՝ ծածկած շուկայում: Այս տեղեկությունը ճիշտ պետք է լինի, քանի որ աստատվում է մի այլ աղբյուրով, որին դեռ չեն անդրադարձել այս ուսումնասիրության շրջանակներում և որին այժմ կանգրդառնանք:

Տկաշովը մեզ բացատրեց, որ Դաբրովսկու ներկայացրած դամբարանային տակագիծը ուղեկցվելու էր ուսումնասիրությանը, որը պետք է վեր հաներ դամբարանի կամարակապ դաշիկներից մեկի հարավ-արևելյան պատի երկարությամբ արված զոնդաթի արդյունքները: Վախճանվելով, նա շկարողացավ հրատարակել իր հոդվածը. հատակագիծը, որը պահվում էր Վարշավայում, անտիպ էր մինչև այն ժամանակ, երբ Տկաշովն օգտագործեց այն իր հիսերտացիայում: Դաբրովսկին իրականում միակը չէր, որ զոնդաթ անցկացրեց դեպի Դանիելի սրբարանը տանող կամարակապ սրահներում: Իր հատակագծի վրա ցույց չափումը դամբարանի և ջրամբարի դիրքը, Բրեշիան մոտանում է նաև նշել Լուկմանի շիրմից ոչ հեռու իր կողմից ուսումնասիրված 1X1X2 մետր մակերեսի դիրքը: Ավելին, նա մոռացել էր նաև հիշատակել այդ գոնդաթի առկայությունը իր հայտնի հոդվածում և ուրեմն չի նկարագրել իր հայտնաբերածը: Մենք ուրիշներին ենք թողնում լուսաբանելու այս մոռացությունը սլավոնները, ինչպես նաև լուսաբանում են այն անձնավորության, որն աստիճանի անգամ լինելով թարգմանեց քուֆայական արձանագրությունները: Իրեն չի անհրաժեշտ իր ուսումնասիրության ընթացքում հայտնաբերել էր երկու փոքր սլավոնների վրա: Նույն անձնավորությունը թարգմանել է նաև ջրամբարի խորքում և արտաքին Ա գետնուղու վրա գտնված արձանագրությունները, սրոնց մասին Բրեշիան որոշ շափով ակնարկում է իր հոդվածում³⁵: Այս արձանագրությունները թարգմանված կան նաև իսլամական շրջանի Ալեքսանդրյան մասին արաբերենով գրված ընդհանուր բնույթի մի աշխատության մեջ³⁶, որ մենք թարգմանել տվեցինք՝ տեղեկացված լինելով, որ այնտեղ նեբի Դանիել մզկիթի մասին տեղեկություն կա: Արդ, առաջին սյան վրա կար հետևյալ արձանագրությունը.

«Ս՝գկիթը սկսել է [կառուցվել] հիշրի 520-րդ տարում (մ.թ. 1126) Ռաբի էլ Ախար [ամսվա ընթացքում]: Յանուն Գթասիրտ և Կարեկից Աստծու լինի... տերը նրանց ուրախացրեց իր ներողամտությամբ, հիշելով այն ուրախությունը, որ պատճառում է և մեծ է վարձատրությունը: Ովքեր երկնշում են Աստծուց՝ հաստատապես դրախտ կգնան և կլինեն հզոր Աստծո իրական գահի լույսը: Աբուլ Կասիմ Բեն Աբուլ Հասան Բեն Աբուլ Կասիմ ալ Բադին մահացավ հիշրի 561 տարվա (մ.թ. 1166) Ջումադ-ալ Ախիր ամսում, Աստված թող ողորմած լինի նրա և բոլոր մահմեդականների հանդեպ, ամեն: Թող Աստված օրհնի մեր տիրոջը՝ Մուհամմեդին և նրա ընկերակիցներին: Աստված մեզ պատում է և մեծ է նրա առաքյալը: [Շատ] բարձր և [շատ] հզոր Աստծուց առավել մեծ զորություն և ուժ չիք»³⁷:

հասկացվում է այս ճշգրտման կարևորությունը՝ «ցածր տնակի», «ինչպես մի տեսակ մատուռ» արտահայտությունների հետ կապի շնորհիվ, որոնք կան ճանապարհորդների նկարագրություններում: Հիշենք նաև, որ «inasjid» արտահայտությունը կարող է վերաբերել նաև դամբարանային մզկիթի: Մենք նրան հարցրինք, թե իբն Աբդ ալ-Հաթամի տեքստը արդյո՞ք նշում է, որ Զուլ Կառնային այս ազոթարանը գտնվում է քաղաքի «մեջ», թե՞ քաղաքից «դուրս»: Նա առանց վարանելու պատասխանեց, որ «դուրս գալիս» նշանակում է քաղաքի պարիսպներից դուրս գալու գործողությունը, ազոթարանը գտնվում էր «իհարկե» ներսում:

³⁵ Breccia. 1933, p. 50: «Արևմտյան անկյան մոտ ցիր ու ցան բլուկների մեջ տեսանելի էին մարմարանման նյութով պատված կրահողային սյուների բեկորներ և մարմարե մի սալիկ՝ արարական արձանագրության մնացորդներով»:

³⁶ Al Iskandariya wa Hadaratika fi al-'Asr al Islami, p. 330—340.

³⁷ V. Asensi Sempere-ի թարգմանությունը:

Հավանաբար, սյունը կարող էր բերված լինել դամբարան և հիմնադրման ժամկետը կարող էր վերաբերել այլ մզկիթի: Սակայն փորելով մինչև 1,60 մետր, Բրեշխան հանդիպեց զանազան շինանյութերով լի մի հողաշերտի, որից նա առանձնացրեց մի պատ: Այս պատի մոտ գտնվում էր մի այլ քուֆայական արձանագրություն:

«[.../ Վերջին դատաստանը՝ Նասերի դուստրը՝ ուղարկված[.....]-ից Աբդ Ալլահ Բեն Մուհամմեդը վարդապետում է, որ այլ Աստված չկա, բան միակ, աննման Աստվածը[...]:»

Մեկ կարծում ենք, որ այս արձանագրությունը պատկանում է հիջրայի չորրորդ դարին, այսինքն մեր թվարկության տասներորդ դարին: Մեկ դար առաջ Իրն Աբդ ալ-Հաքամը գրում էր, որ Ջուլ Կառնայնի մի «աղոթարան» գտնվում է Ալեքսանդրիայում: Արդ, այս արձանագրության վերևում, ավելի ուշ շրջանի քան ալ-Հաքամի գրություններն են, Բրեշխան հայտնաբերում է մի սյուն, որտեղ նշվում է, որ հիջրի 520 թ. մի մզկիթ հիմնվեց, Աբդուր Տահաբի շե³⁸ ենթադրել, որ այս երկրորդ արձանագրությունը պատկանում է մահմեդական աղոթարանին, որը մեկ դար հետո վերածվեց մզկիթի:

Իսցի այս արձանագրություններից, ուսումնասիրության մեջ բերվում է երկու կարևոր պատմական տեղեկություն: Առաջինը Եբեի Դանիել մզկիթի մասին մինչ օրս հայտնի ամենահին վկայությունն է: Ալեքսանդրիայում Սուլթանի լիազոր դեսպան Գարս էգ Դին Ջալիլ էլ Ջահարին, որը վախճանվել է հիջրի 873 թ. (մ. թ. 1468), գրել է. «Սուրբ և նվիրական վայրերի թվում են չէի հապաղի նշել Դանիելի սրբարանը, խաղաղություն նրան»:

Ըստի, եթե Դանիելին նվիրված սրբարանը շատ ավելի վաղ գոյություն ուներ, քան Լեոն Աֆրիկացու այցելությունն էր (1515), ինչպես նաև նկատի ունենալով այս մարգարեին նվիրված սրբավայրերի հազվագեղությունը, ավելի քան հավանական է, որ խոսքը գնում է մինչ օրս այդ անունը կրող մզկիթի մասին: Մենք, առանց աղբյուրը նշելու, ավելացնում ենք նաև մի այլ տեղեկություն: Մեզ թույլ չէինք տա այն հղել, եթե վերջինս չհաստատեր Իբն Աբդ ալ-Հաքամի նոր թարգմանության անտիպ մի հայեցակետը: Լեոնի և Սարմուլի կողմից հղված մատուռին անդրադառնալով, ասվում է. «Հազվագյուտ են XV—XVI դդ. ճանապարհորդները, որոնք մատնանշում են այն և որոնց կարելի է վստահել: Նրանք հավատացած էին, որ այցելում են Ալեքսանդրի շիրիմին, որ մինչ այդ գտնվում էր «Միշմիշ էլ Բասալ» («Mishmish el Basal») փողոցում, կաթնեղենի վաճառանոցի շրջանում [...]»:

Այս տեքստը կարողալիս հնարավոր չէ կասկածել, որ հեղինակը ձեռքի տակ ունեցել է մեզ անծանոթ տեղեկություններ, և արաբական աղբյուրները դժվար թե Ալեքսանդրի գերեզմանի վերաբերյալ իրենց բոլոր գաղտնիքները մեզ տրամադրած լինեն:

«Ես գտավ գանձի թվագրումը, որը Սակեդոնացի արքա Ֆրիլիպի որդու՝ Ալեքսանդրի ժամանակակիցն էր. այս գանձը մոտ յոթ հարյուր տարվա հնություն ուներ Արքան եկավ տեսնելու գանձը և այն տվեց սուրբ Թեոփիլոսին, որով նա եկեղեցիներ կառուցել տվեց, սկսելով Սուրբ Հովհաննես Մկրտչի, Եղիայի և նրա աշակերտի՝ Եղիշեի եկեղեցիներից: Նա փոխադրեց այնտեղ նրանց մարմինները և այն այժմ հայտնի է Դիմոս անունով»³⁸:

Թեոփիլոս պատրիարքի օրոք Դիմոսում հայտնաբերված գանձի մասին Հայսմավուրթի առեղծվածային տեքստը, որը, ուրիշների թվում նշում է Ջուլերը³⁹, իրականում լուսաբանվում է նաև երկու այլ աղբյուրների կողմից. Խոսքը վերաբերում է Աբու էլ Մաքարիմի մի հատվածին, որը վերցրել ենք 1984 թ. նոր հրատարակությունից⁴⁰ ինչպես նաև Հովհաննես Նիկեացու ժամանակագրության մի հատվածին, որը Սոմայով զբաղվող հեղինակները, 1883-ից ի վեր, թվում է, թե չեն նկատել: Աբու էլ Մաքարիմը այսպես է գրում. «Հով-

³⁸ La géographie de l'Égypte à l'époque copte, Paris, 1893, թարգմ. է. Ամելիտյոյի:

³⁹ A. Zoghbe (comte de). Etudes sur l'ancienne Alexandrie, 1909, p. 156.

⁴⁰ Abû al-Makarim, Tarikh al-Kanā'is wa-al-Adyirah, 4 vols, Le Caire, 1984.

հաննես Մկրտչի և Եղիա մարգարեի եկեղեցին, որ ակնհայտորեն տուժել է ալաոսանքների ժամանակաշրջանում, վերականգնվում է Թեոփիլոսը՝ Երեսուներեքերորդ պատրիարքի կողմից: Հովհաննեսի աճյունը գրվել է այնտեղ, սակայն գլուխը հետագայում հայտնաբերվել է նմեսայում (Հոմասում) Դիոսկորի (444—458)՝ Երեսունհինգերորդ պատրիարքի օրոք (Աբու էլ Մաքարիմ)»⁴¹:

Ղպտի վանականը նախ հաստատում է Թեոփիլոսի կողմից կառուցված եկեղեցու առկայությունը, ասելով, որ սուրբ Հովհաննես Մկրտչի աճյունն իսկապես այնտեղ է գտնվում, սակայն առանց գլխի, որը վերստին հայտնաբերվում է Հոմասում՝ Սիրիայում, Դիոսկոր պատրիարքի օրոք (444—458): Նա մեկ անգամ ասում է նաև, որ քրիստոնյաների հալածանքների ժամանակ եկեղեցին փակվել է և Թեոփիլոսը այն ոչ թե կառուցել է, այլ վերականգնել: Հստեբե-վույթին Հայսամավուրքը հղացվել է նման մի տեղում, Դիմոսում: Ավանդույթը լեյադրում է երկու-երեք եկեղեցիների կառուցումը տարբեր տարածքներում: Համաձայն Հովհաննես Նիկեացու մի հատվածի, որից նա կարող էր օգտված լինել պարսկերեն Հայսամավուրքի տեքստը լուսաբանելու համար, Սուրբ Հովհաննես Մկրտչի եկեղեցին հնարավոր է, որ քաղաքի կենտրոնում չլիներ, այլ մերայումից (Serapeum) բլրի վրա: Սուրբ Հովհաննեսի մասունքները թերևս ոչնչացումից փրկվել են կեսնում ճամփորդող ալեքսանդրիացիների շնորհիվ, որոնք գրանք իրենց հետ տարել են Ալեքսանդրիա և հանձնել Աթանաս պատրիարքին:

«Այլ ժամանակաշրջանում շարագործներն ու կռապաշտները մի խարույկ վառելիք՝ սուրբ Հովհաննես-Մկրտչի աճյունն այրելու համար: Սակայն մեր օրերը, Հիսուս Քրիստոսի միջամտությունը նրանց նպատակներն ի դերև հանեց. ահարեկվելով մի սարսափելի հայտնությունից՝ այդ մարդիկ փախուստի դիմեցին: Ալեքսանդրիայի մի քանի բնակիչներ, որոնք մասնակցում էին այդ խրապարծությունը, վերցրին սուրբ Հովհաննեսի աճյունը, փոխադրեցին Ալեքսանդրիա և գաղտնապես կրկին հանձնեցին պատրիարք սուրբ Աթանասին՝ նրա փախուստից առաջ: Վերջինս այն վստահեց և պահ տվեց քաղաքի հայտնի բնակիչներից մեկի՝ ատենակալի տանը: Այս գաղտնիքը գիտեին միայն մի քանի վանականներ և Թեոփիլոսը՝ երրորդ պատրիարքը (Աթանասից հետո), որն այն ժամանակ, երբ սուրբ Հովհաննեսի աճյունը այս ձևով Ալեքսանդրիա էին բերում [Ս. Դիրք] ընթերցող և սաղմոսասաց էր: Իրոք, Աթանասին հաջորդեց Պետրոս պատրիարքը, որին էլ հաջորդեց նրա եղբայրը՝ Տիմոթեոս Ակտեմոնը (Actemon), իսկ սրան էլ՝ Թեոփիլոսը, որը քանդեց [՝] կոչված-տաճարը և այն վերածեց եկեղեցու: Հենց այս եկեղեցին՝ մեծ ու հարաշարի կառույցը, որ արտասովոր հոյակերտ էր, Թեոփիլոսը օժեց հանդիսացրույթյամբ, որպեսզի այն դառնա սուրբ Հովհաննեսի աճյունի կացարանը: Պատմում են նաև, որ որոշ ժամանակ անց, Թեոփիլոսը սուրբ Հովհաննեսի աճյունը, նրա գլխի հետ միասին, փոխադրել տվեց եկեղեցու կենտրոնում կառուցված գերեզմանը և այս առիթով մեծ խրախճանք ու հանդիսավոր տոնակատարություն կազմակերպեց, իսկ քաղաքաբնակները՝ փառավորված իրենց պատրիարքով, նրան պարգևատրեցին գովեստներով (Հովհաննես Նիկեացի)»⁴²:

Չպետք է մոռանալ, որ այս տեքստը թարգմանված է եթովպերենից: Այն տեղում, ուր նշված է տաճարի անունը, թարգմանիչը կասկածել է, նշելով, որ տարակուսում է եթովպական բառի մեջ ճանաչել «Serapis»-ի աղավաղումը, ավելի շուտ տեսնելով «Actemon» բառի կրկնությունը, որը բերվել էր մերևում՝ Տիմոթեոսին որպես «խեղճ» բնութագրելու առիթով: Եթե այդպես է, ապա դա անկասկած ընդօրինակողի սխալն է, քանի որ պարզ է, որ Թեոփիլոսի կողմից քանդված տաճարը, որի մասին տեքստում խոսվում է՝ Serapeum-ն է: Ուստի, եթե եկեղեցին, ուր Թեոփիլոսը փոխադրել է սուրբ Հովհաննես Մկրտչի աճյունը Serapeum-ն է և եթե այն եկեղեցին ուր նա փոխադրեց սուրբ Հովհաննես Մկրտչի, Եղիայի և Եղիշեի աճյունները՝ Dimos-ն

41 A. S. Atiy a. The Coptic Encyclopedia. New York, 1991, p. 93.

42 H. Zol enber g. Chroniques de Jean, évêque de Nikiou. Paris, 1883, p. 315.

է, ինչպես այդ մասին վկայում է Հայամավորքը, տրամաբանական չէ՞ արդյոք եզրակացնել, որ Serapeum-ի վրա կառուցված եկեղեցին «Dimos» կոչվածն է:

Տրամաբանությունը և «Վարք սրբոցը» իրականում միշտ չէ, որ համատեղելի են: Հովհաննիսի տեքստը (VII դար) շատ ավելի հին է, քան Աբու էլ Մաքարիմի (VII դար) և Հայամավորքի (միջնադար) տեքստերը: Ժամանակագրորեն այն առավել մոտ է իր հիշատակած իրադարձություններին և առավել արժեքավոր՝ լինելով մեկ և միևնույն հեղինակի ստեղծագործությունը, ի հակադրություն մյուս երկու տեքստերի, որոնք (հատկապես Հայամավորքը) բազմաթիվ աղբյուրներ են համադրում: Արդ, Հայամավորքը կարող էր շփոթություն մտցրած լինել Serapeum-ի, ուր սուրբ Հովհաննես Մկրտչի աճյունը տեղադրվեց և Dimos վայրի միջև, ուր դրվեցին Նղիայի և Եղիշեի աճյունները: Հովհաննիսի տեքստը չի անդրադառնում Եղիայի և Եղիշեի աճյուններին: Այն մատնանշում է միայն սուրբ Հովհաննեսի և նրա «cheif»-ի՝ այսինքն նրա հատված գլխի պահպանումը: Քանի որ սրբերի կյանքը կրթեր պարզ չի եղել, այս փուլում է, որ եգիպտական աղբյուրները հակասության մեջ են մտնում սուրբ Հովհաննես Մկրտչի կյանքի պաշտոնական պատմության հետ:

Ինչպես կարդում ենք «Վարք սրբոցում», Հուլիանոս Ուրացող կայսեր հրամանով հեթանոսները 362 թ. պղծեցին սուրբ Հովհաննես Մկրտչի գերեզմանը և այրեցին նրա մասունքները՝ դրանք խառնելով կենդանիների ոսկորներին, որպեսզի անարգանքը լիակատար լինի: Չնայած մոխիրն այնուհետև ցրվել արվեց, այդուհանդերձ սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքները դարձան մեծ վիճարանությունների առարկա: Գլխատված սրբի իսկական համարվող գլուխն, օրինակ, պաշտամունքի առարկա է Ամիենի (Ֆրանսիա) տաճարում: Այս գլխի ճակատի վրա կա այն վերքի անցքը, որ Հերովդիայի դանակն է թողել: Սալոմեն՝ նրա դուստրը, Հերովդես արքայից որպես վրեժ խնդրել էր սուրբ Հովհաննես Մկրտչի գլուխը: Այդ մասունքը հետագայում՝ 1206 թ., Կոստանդնուպոլսից մի կանոնիկոսի միջոցով փոխադրվեց Ամիեն՝ ընդելուզված մի հրաշալի ոսկյա սկուտեղի վրա, խորհրդանշելով այն սպասքը, որի վրա Սալոմեն պահանջել էր, որ գլուխն իրեն բերեն: Արդ, Կոստանդնուպոլսում էր գտնվում Հերովդոն եկեղեցին, ուր Թեոդոսիոսը կարող էր ահա տված լինել սուրբ Հովհաննես Մկրտչի գլուխը: Վարքագիրներին թողնենք պարզելու, թե Ամիենում գտնվող գլուխը Serapeum-ում Թեոփիլոսի կողմից թաղված և հետագայում Թեոդոսիոսի կողմից փոխադրվածն է, թե՞ ոչ:

1909 թ. սկսած Զողբեր մատնանշում էր Սի Լուկման էլ-Հաքիմի շիրմի առկայությունը Նեբի Դանիելի շիրմից երկու-երեք մետր հեռավորության վրա: Այս առակագրից, որի հիշողությունն ու խելքը գովաբանում է Դուրանը⁴³, մեզ են հասել քառասունմեկ առակներ և բազմաթիվ իմաստուն ասույթներ: Շելս Բուբաքիր⁴⁴, վերարտադրելով և լրացնելով Ռընե Բասեի⁴⁵ աշխատությունը Լուկմանի մասին, նկատում է, որ ըստ զանազան ավանդությունների Լուկման իմաստունը հրեաների երկրորդ արքայի՝ Դավթի ժամանակակիցն էր: Հիշեցնենք, որ վերջինս թագավորել է մ. թ. ա. մոտ 1015—975 թթ., և ինչպես բրիտանացիները, նույնպես էլ մահմեդականները նրան մեծարում են որպես մարգարե-աստված: Դավթին իրականում կարող էր ասած լինել Լուկմանին. «Օրհնյալ լինե՛ս, օ՛ Լուկման: Դու ստացար իմաստնություն և խուսափեցիր ձա-

⁴³ «Мы еще раньше даровали Лукману мудрость: «Благодаря Аллаху! Кто благодарит, тот благодарит для самого себя, а кто неблагодарен... Понстине, Аллах—богат, славен» (Коран, перевод и комментарии И. Ю. Крачковского. М., 1986, Сура 31. 11, с. 338).

⁴⁴ H. Boubakeur (cheikh), Le Coran, 1995, p. 1287—1295.

⁴⁵ R. Basset. Loqman berbère. 1892, Paris.

խորդուկյուններից, մինչդեռ 'Իավիթը ստացավ իշխանություն, սակայն փորձությունների և ապստամբությունների ենթարկվեց⁴⁶:

Մասուդին⁴⁷ (մոտ 943), որը մահմեդական այն հազվագյուտ հեղինակներից է, որ աշխատում է վերականգնել Լուկմանին վերաբերող աշխարհագրական ու ժամանակագրական փաստերը, ասում է, որ նա ծնված պետք է լինի Այլայում 'Իավիթի թագավորության երկրորդ տարվա ընթացքում: Հավանակա՞ն է արդյոք, որ Նեբի 'Իանիել մզկիթի դամբարանն ամփոփեր իր մեջ այն մարդու աճյունը, որն Ալեքսանդրից յոթ դար առաջ է ապրել և 'Իանիելից 'ինչ: Պրոբլեմն իրականում այս անձնավորության շահագանց առասպելացված կյանքի խառնաշփոթ բարդության մեջ է: Ըստ արևելյան որոշ ավանդույունների, Այլայում ապրող մի հրեա ներկարարի այս գոեհիկ ստրուկին պետք է կապել հարավային Արաբիայում տարերային աղետի հետևանքով բնաջնջված Ադ ցեղի հետ, կամ նուբիացիների, և կամ նույնիսկ հաբեշների Լուկմանի և արաբներին հարևան կամ նրանցից հեռու գտնվող ժողովուրդների նսանօրինակ իմաստուն ասույթները համեմատելով, շատ արևելագետներ այս անձնավորությանը նմանեցնում են առասպելական, դիցաբանական կամ աստվածաշնչյան բազմաթիվ հերոսների, ինչպիսիք են Պրոմեթևսը, Ալկմեոնը, Lucien-ը, Սողոմոնը. նույնացնում են նաև Բաղամի հետ կամ, նույնիսկ, ինչպես մտածում էր Ռենե Բասեն, Եզովպոսի հետ՝ տձև և սրամիտ փոյուղիցի մի ստրուկի, ասում է լեգենդը, որից Ֆեդրը և Լաֆոնտենը ներշնչվել են իրենց տողերը գրելիս: Ինչ վերաբերում է մահմեդականներին, վաղուց արդեն միասնական կարծիք չկա առակագրի գերեզմանի վերաբերյալ: Ալեքսանդրիական ավանդույունը, փաստորեն, ցանկանում է, որ իմաստունը թաղված լինի խնդրո առարկա դամբարանում, բայց մեր թվարկության մոտավորապես 1215 թ. ապրած Հալեպի սուֆիական շեյխ ալ-Հարավի ուղեցույցը նրա գերեզմանը տեղադրում է զանազան տեղերում, այդ թվում Թիբերիաթ լճի մոտ, իսկ մի ուրիշը՝ Եմենում: Մի այլ ավանդույուն էլ նրան հիմնարկների արքա է դարձնում:

Անտիկ աշխարհում հիմնարկները կամ հիմնարկները հարավային Արաբիայի նշանակալից էթնիկ և քաղաքական խմբավորումներից էին: Մեր թվարկության առաջ դեռևս V դարից Արաբական թերակղզու հարավային լեռներում հաստատված նրսնց երկիրը մ. թ. III դարում միավորվեց: III դարում եթովպական տիրապետության տակ, իսկ IV դարում՝ քրիստոնեության «գրկում» հայտնված նրանց քաղաքակրթությունը, որը հին հեղինակների մոտ հանդես է գալիս «Homeritai» կամ «Homerites» անվան տակ, հասավ կատարելության շատ բարձր մակարդակի, ունենալով ոչ միայն սեմական այրուբնից ծագող մոնոթեիստական գիր, այլև Զաֆարը որպես մայրաքաղաք: Արդյո՞ք նա, որ նախաիսլամական պոեզիայում մե՛կ որպես ավարառու արկածախնդիր, մե՛կ որպես բարոյախոս է հանդես գալիս առասպելական Լուկմանին է և կամ որպես հիմնարկի արքա ուժեղ մի բանակով, որ ամփոփված է Նեբի 'Իանիելի դամբարանում: Մենք չենք կարող այդ ասել: Սակայն, ինչպես շեյխ Բուբաբին է գրել այդ մասին, հազվագյուտ դյուրամատչելի աղբյուրներում եղած անստուգություններն ու խառնաշփոթը, միանալով որոշ ժամանակագիրներին անմիտ շարադրանքներին, ուսումնասիրողներին մղում են ամենահակասական եզրահանգումների: Պատմությունը թաքցնում է մեզից Լուկման էլ-Հաբիմի կամ Լուկման իմաստունի ճշմարիտ անձը: Եվ մեզ համար անհայտ է, թե Նեբի 'Իանիել մզկիթի դամբարանում արդյո՞ք հենց նա է հանգչում: Բազմաթիվ առեղծվածներին գումարվում են նաև այս երկուսը և այն էլ մեկ դամբարանի համար:

«Ալեքսանդրիայի ժողովուրդը հավատում է, որ 'Իանիել մարգարեն թաղված է այդ քաղաքում՝ Կոմ-էլ Դեմասի ստորոտին: Այստեղ նույնիսկ մի

46 Bosworth et al., Encyclopedie de l'Islam, V, 1986, p. 818.

47 Mas'udî. Les prairies d'Or. Paris, 1962, թարգմ. Բարբիե դը Մեյնարի, Պավե Դը Կուրտեյի և Պելլայի:

հրաշալի, ստորերկրյա դամբարան կա Ջամի նաբի-Դանիել («Դանիել մարգարեի մզկիթ») անունը կրող մզկիթի կենտրոնում, սակայն ոչ մի արար կամ այլ գրող չի հաստատում: Կրթված մարդիկ ևս ամենևին չեն կիսում ժողովրդական այդ հավատալիքը: Հայտնի է, որ Դանիել Մարգարեն մահացել է Կյուրոս արքայի կառավարման առաջին տարիներին՝ Ալեքսանդրիայի հիմնումից ավելի քան երեք դար առաջ: Սակայն որտեղից կարող էր այդ սխալը բխել և ի՞նչ հետևություն կարող ենք անել դրանից»,—հարցնում է Մահմուդ Կաշան⁴⁸: Աստղագետ-հնագետը փորձել է լուծել այս գաղտնիքը հետևյալ կերպ. «Դանիելը աներկբայորեն ճանաչված էր որպես մարգարե, մինչդեռ Ալեքսանդրը, որպես այդպիսին, ճանաչված է մի քանի հոգու կողմից միայն: Ալեքսանդրիայի լիովին անկում ապրած ժողովրդի անգիտությունն է Ալեքսանդր մարգարեի և Դանիել մարգարեի այս շփոթության պատճառը. առաջինը առավել ճանաչված էր ժողովրդի կողմից, քան նա: Այս հիպոթեզը մեր առջև բացում է գաղտնիքի լուծման ճանապարհը, քանի որ սխալը կարող էր բխել միայն որոշակի ավանդությունից: Վերջինս Կոմ-էլ-Ինմասում մի շատ կարևոր մահարձանի առկայության մասին է պնդում, որ միայն Ալեքսանդրի գերեզմանը կարող էր լինել: Ահա, թե ի՞նչ կարելի է քաղել ժողովրդական այս սխալից»:

Իացի նրանից, որ Ալեքսանդրի հանրաճանաչությունն ավելի մեծ է, քան Դանիելինը, Մահմուդ Բեյը չի բացատրում, թե ինչու է մեկը դուրս մղել մյուսին: Այսինքն չի անդադրում այն պատճառներին, որոնցով Ալեքսանդրը փոխարինվել է Դանիելով, Վոթանին, որին արդեն անդադրաբան ենք, այս շփոթության մեխանիզմը բացատրում է պատմության զարտուղի ճանապարհներով: Ալեքսանդրը, ինչպես նաև Դանիելը, ասում է Վոթանին⁴⁹, վախճանվել են Բաբելոնում: Սակայն Ալեքսանդրիայի ժողովուրդը որն այնքան էլ տգետ չէր, ինչպես պնդում էր Մահմուդ Բեյը, պետք է, որ Բաբելոնյան իրազեկ լինելը՝ յուրովի փոխակերպելու համար պատմական այս մանրամասնը: Ըստ Բրեյչայի⁵⁰, ի վերջո այնքան էլ կարևոր չէ պարզել, թե ինչն է դրդել հավատալու, որ մզկիթի տակ թաղված մարմինը Դանիելինն է: Չնայած այս դարմանալի դիտարկմանը և հակառակ այն բազմաթիվ ուսումնասիրողներին, որոնք Նեբի Դանիելի մասին գրել են՝ առանց լուսաբանելու նրա անվանակոչության պատճառը, Մահմուդ Փաշան և Վոթանին գոնե փորձ արեցին մասամբ պատասխանել այս հարցին: Իսկ ըստ Ֆրեզերի բացատրության, որն ամենայն հավանականությամբ ընդունված է մի խումբ արաբ գիտնականների կողմից, որոնց անունները նա չի նշում, Դանիելը փաստորեն պիտի լինի Իրաքի Սոսուլից ոմն շեյխ Դանիալ, որն ապրել է Ալեքսանդրիայում մ. թ. V III դարում և որը մզկիթը վերածել էր շաֆիիտական լուսավորության դպրոցի: Բացատրությունը հետաքրքրական է, սակայն Ֆրեզերը ինքը ևս բացահայտում է (և ամենևին չգիտենք, թե ինչպես), որ Շեյխ Դանիալը մզկիթը հնում կոչվել է «Ալեքսանդրի մզկիթ»⁵¹: Մի ուրիշ բացատրություն ևս կա, որը գեոևս չի դիտարկվել: Այն լուսաբանելուց առաջ խոսենք Ալեքսանդրի անձի հետ կապված մի այլ շփոթության մասին:

Պատմաբան Իբն Աբդ ալ-Հաքամը, ասում է Մաքրիզին (IX դար), պատմում է, որ Ալեքսանդրիան կառուցողը և նրա հիմքերը դնողը Ջուլ Կառնայն Հուլյանն էր, որի անունը Ալեքսանդր էր և որն իր անունը տվեց Ալեքսանդրիային. նա էր, որ առաջինը ոսկյա կերպասներ պատրաստեց և նրա հայրը եղև: առաջին Կեսարը⁵²: «Իբն Լահիան»,—ավելացնում է ալ-Հաքամը՝ նկնելով ալ:

48 Mahmoud el Falaki (Bey), 1872, p. 52.

49 H. de Vaujan y. Recherche sur les anciens monuments sites sur le Grand Port d'Alexandrie. Alexandrie, 1888, p. 68—69.

50 B. Breccia. Les sondages pres de la Mosquee Nabi Daniel et ceux de la Rue El Bardissy—Le Musee Greco-Romain d'Alexandrie, 1931—32, Bergamo, 1933, p. 45.

51 P. M. Fraser. Ptolemaic Alexandria, 1972, II, p. 38.

52 M. U. Bouriant. Maqrizi. Description Topographique et Historique de l'Egypte.—Mem. Miss. arch. franç, 1895, XVII, I, p. 420.

և գիպտոսի ժամանակագրի և դատավորի մի քանի տեքստերից, որի երկերը հիմնական մասը մեկ գիշերվա մեջ այրվեց 786-ին,— «ասում է, որ այս երկրի բնակչությունը հույն էր, իսկ ինչ վերաբերում է (Ալեքսանդրին), ապա ենթադրում է, որ նա հիմնադրի⁵³ է: իսկ իբն Թորբան⁵⁴ նրա մասին գրում է»

«Իմ պապը Զհուլ Կառնեյնը մասնագրական էր

և՛յ արքա, որի առաջ խոնարհվում էին արքաները հավաքների ժամանակ:

և՛ա հասավ Արևմուտք և Արևելք՝ փնտրելու

և՛վ ստանալու մի խելոք փիլիսոփայի գիտելիքները,

և՛ա տեսավ մայրամուտը այն կետում, ուր արևը մայր է մտնում:

Այնտեղ, ուր կա անձրևազուրկ մի աղբյուր՝ լցված գարշահոտ տիղմով...»⁵⁵

Այս հատվածը ակնհայտորեն ներշնչված է Ղուրանից⁵⁶: Այս փուլում Ալեքսանդրը Զուլ Կառնայնն է, որը մի հույն է, բայց նաև հիմնադրիտ և մահ-մեղապահ: Արևմուտքի Մակրիդին, այլ տեղեկություններ փնտրելով Զուլ Կառնայնի մասին, ուրիշ վկայություններ է բերում: Հետևյալ տեղեկությունը բանավոր բնույթի է.

«Դուք ցանկանում եք,— շարունակում է մարգարեն,— ինձ հարցնել Զուլ Կառնայնի մասին և ես պետք է ձեզ ասեմ այն, ինչ ձեռք գրքերում է գրված նրա մասին: Սկզբում նա Ռումի երկրից եկած մի երիտասարդ տղա էր, որը թագավորություն ստացավ: Ապա մի արշավանք նախաձեռնելով՝ հասավ Եգիպտոսի ծովափը, այնտեղ քաղաք հիմնեց, որը ստացավ Ալեքսանդրիա անունը: Երբ նրա կառուցումն ավարտվեց, մի հրեշտակ եկավ, որը նրան վերցրեց և քիչ-քիչ Կարճրացնելով զեպի երկինք, հասցրեց շատ մեծ բարձրության: Զուլ Կառնեյնը առաջին անգամ բարձրացրեց աչքերը և հրեշտակը նրան ասաց.— նայիր: ներքև:— Տեսնում եմ,— ասաց Զուլ Կառնեյնը,— իմ քաղաքը և նրա հետ միասին այլ քաղաքներ: Հրեշտակը քիչ ևս բարձրացավ և ասաց. նայիր.— նա միայն իմ քաղաքն էմ տեսնում, իսկ ուրիշները՝ ոչ:— Այն, ինչ տեսնում ես այսպես,— ասաց հրեշտակը,— դա ողջ աշխարհն է և այն, ինչ շրջապատում է աշխարհը՝ ծովն է: Քո տերը ցանկացավ քեզ ցույց տալ աշխարհը և քեզ վորություն տվեց, որը հետագայում դաս կլինի անգեղանների և փորձություն՝ գիտունների համար»⁵⁷:

Շատ քիչ է մնում, որ այժմ արդեն նաև իմաստուն Ալեքսանդրը հրեշտակ պատնա: Եվ հենց այդպես էլ լինում է: Մաքրիդին ասում է, որ Օմար բեն էլ հատաբար լսել է, թե ինչպես է մի մարդ գոռում. «Օ, Զուլ Կառնեյն»,— ասում է նա,— օ, Աստված իմ, ներիբ: Մարգարեներն այլևս ձեզ չեն բավարարում, որ հրեշտակներին եք կանչում»⁵⁸:

Փաստորեն բանավոր ավանդությունը մեզ է հասել մի մարգարեի միջոցով, որի անունը չգիտենք: Մաքրիդին բացատրում է, որ անանուն մարգարեն այն պատմել է երկու ծերունիների, որոնք էլ փոխանցել են ոմն Սաադին Մեսաուդ էլ Թաջիբին, որն իր հերթին այն պատմել է Աբդել Ռահմանին, վերջինս՝ հաղորդել է Աբդել Ալլահ բեն Ուահեբին, որն այն փոխանցել է Օթման բեն Սալեհին, վերջինս էլ ի վերջո պատմել է Մաքրիդինին: Սա հիշեցնում է ժողովրդական մի խաղ, երբ սեղանակիցները սեղանի մի ծայրից մյուսը շնչալով մի բառ են փոխանցում, որը վերջում ազավաղվում է: Ինչո՞ւ ենք ուրեմն զարմանում տեղի ունեցած ազավաղումների ու նույնացումների վրա: Սակայն կարևորն այն է, որ այդ հորինվածքների հիմքում իրականում ճշմարտություն է ընկած: Այդ հիմքը միայն մենք չենք, որ փնտրում ենք: Արարներն իրենք էլ էին փնտրում: Այսպես, զայրացած այս ակնհայտ շփո-

53 Bouriant, 1895, p. 420.

54 Մաքրիդի կողմից նշված այս անձնավորության ինքնությունը հնարավոր չէր լինի:

55 Bouriant, 1895, p. 420

56 Տե՛ս ծան. 32:

57 Bouriant, 1895, p. 421.

58 Նույն տեղում, էջ 422:

խումբյուններին, առավել գիտակաները փորձում են դրանք բացատրել: «Բայց որտեղից՝ այս սխալը պետք է առաջանար», — գրում է Մահմուդ Բեյը 1872-ին խոսելով Դանիելի հետ նույնացման մասին: Մաքրիզին նշում է էլ-Դին էլ Ռազվի անունով մի հմմտի, որը Ղուրանի մի մեկնության մեջ Ալեքսանդրի մասին գրում է. «Ինչ վերաբերում է Ձուլ Կառնեյնին, նա մի մարգարե է: Ինչպես՝ կարող էին շփոթել մարգարեին այդպիսի կռապաշտի հետ»⁵⁹:

Որովհետև Իմամ էլ-Դին էլ-Ռազվի շփոթեր, որ Ձուլ Կառնեյնը՝ երկեղ-ջուր թագավորը, ինչպես վկայում են Իբն Աբբասը և էլ Համադանին, ոչ միայն մի թուրքա էր՝ այսինքն մի հիմնարկան արքա՝ էլ Սաաբ բեն Ձուլ Մորաթեու անունով, այլ նաև Ալեքսանդր Մեծն էր, երբ Ամոնի օազիսյան վերադառնում էր Սիվա՝ կրելու խոյի կերպարանքով Ամոն Աստուծու գույգ եղջյուրները: Սա հիշեցնում է վերը նշված Իբն Լահիայի ավանդությունը, ուր Ալեքսանդրն իրոք թուրքա է: Ժամանակի ընթացքում երկու անձնավորությունները միաձուլվել են մեկի մեջ: Սակայն Իբն Աբբասը՝ Ղուրանի մեկնության հարյր (ծնվ. մոտ 619-ին), որին ոմանք համարում են մահմեդականների առաջին սերնդի ամենամեծ գիտնականը, պատրաստ է բոլորին լուսավորել: Երբ նրան հարցնում ենք, թե ո՞վ է Ձուլ Կառնեյնը, նա պատասխանում է. «Նա մի հիմնարիտ է՝ էլ Սաաբ բեն Ձուլ Սորաթեգ անունով, որին Աստված աշխարհ սուլեց որպես սեփականություն ու ողողեց ամեն տեսակ բարիքներով: Նա հասավ արեգակի երկու եղջյուրներին և աշխարհի ծայրը, պատնեշ կառուցեց Յաջուջի և Մաջուջի միջև: Իսկ Ալեքսանդրը՝ — հարցրին նրան, Ես բարեպաշտ ու հմուտ մի մարդ է Ռումի երկրից, որը Աֆրիկայի ծովափին մի փարոս կանգնեցրեց, գարձավ Հոռոմ քաղաքի տիրակալը, հասավ Արևմուտյան ծովին, ուր հուշարձաններ, պալատներ և քաղաքներ կուտակեց, — պատասխանեց նա»⁶⁰:

Իբն Աբբասը չափազանցնում է այն ամենը, ինչ կապված է Հոռոմի հետ. Քաաբ ալ-Ախբարի նման, որը չափազանցնում է, երբ հաստատում է Իբն Աբբասի պատմածը Ձուլ Կառնեյնի մասին. «Մեր գիտնականների և նախնիների կարծիքով, — ասում է, — նա հիմնարիտ էր և կոչվում էր էլ Սաաբ բեն Ձուլ Մորաթեգ, մինչդեռ Ալեքսանդրը հույն էր, Աբբահամի որդին, որ Իսահակի որդին էր, Եսավի ցեղից: Ժողովուրդը, որից սերել է Ալեքսանդրը, հետևում է Սարիամի որդու՝ Մեսսիայի կրոնին. այս ժողովրդից են սերել Գաղիանոսը և Արիստոտելը»⁶¹:

Նշանավոր արևելագետ Քաթրեմերը մատնանշել է, որ Մաքրիզիի թվարկած հեղինակները ամենայն հավանականությամբ հունարեն շփոթեին, ուստի Լ. դասականներին չէին կարդացել: Հավանաբար նրանք իրենց հմացածը քաղում էին Ղուրանի կողմից սրբագործված ավանդություններից և կամ նրանից, ինչ ղպտիները կարողացել էին նրանց փոխանցել բանավոր կերպով: Քանի որ Սիվայի էպիզոդը արաբ ժամանակագիրների ուղարկությունից վրիպել է, նրանք աշխատել են դա այլ կերպ բացատրել, ինչպես Մահմուդ Բեյը և Վոթանին և կամ ինչպես Ֆրեզերի կողմից թվարկված գիտունները՝ Դանիելի դեպքում: Քոթադայի⁶² համար Ձուլ Կառնեյնը «ոչ հրեշտակ է, ոչ էլ մարգարե, այլ Աստուծոն սիրող, աստվածավախ մի սպասավոր...»: Տերը նրան ուղարկեց իր ժողովրդի մոտ, որը հարվածեց նրա երկու եղջյուրներին: Նա մահացավ և վերանվանվեց Ձուլ Կառնեյն: Մյուս կողմից նրանք ասում են, որ այս վերանվանումը նրան տրվել է այն պատճառով, որ նա հասել է արևի երկու եղջյուրներին՝ ծայրագույն կետերին՝ արևմուտքին և արևելքին. մյուսների կարծիքով՝ քանի որ նա երկու ոլորված հյուսք ուներ, կամ երկու փորրիկ եղջյուր, որ թաքցնում էր փաթեթի տակ»: Երևում է, որ Քոթադան վրաստահ չէ իր հիշատակած վարկածներից և ոչ մեկի վրա: Իրականում սրանք

59 Նույն տեղում, էջ 439:

60 Նույն տեղում, էջ 438:

61 Նույն տեղում:

62 Մաքրիզիի կողմից նշված չճշտված հեղինակ:

տարրեր անձնավորությունների կողմից ներկայացված այլընտրանքային վարկածներ են, որոնք փորձում են բացատրել մի առեղծված, որ իրենք էլ չեն հասկանում: Ի՞նչ այդպես էլ չգիտենք, թե երկու Զուլ Կառնեյններից հատկապես որի՝ մասին է խոսվում. աշխարհակալ Ալեքսանդրի՞, թե՞ Զուլ Մորաթե: արքայի: Հիմա ավելի լավ հասկանալով շփոթության և նույնացման լծակները, մեր առջև մի հարց դնենք. եթե Ալեքսանդրի և Զուլ Կառնեյնի շփոթությունն աղբյուրը Ամոնի պատգամախոսն է, ապա ո՞րն է Ալեքսանդրի և Դանիելի շփոթության աղբյուրը:

Այս հարցադրմամբ էլ մենք կաշխատենք ընթերցողին գոնե մասամբ մոտեցնել Լևրի Դանիել փողոցի վրա գտնվող և Դանիել անունը կրող մզկիթի խնդրի լուծմանը, որտեղ իբր գտնվում են նրա և Լուկման Իմաստունի շիրիմները: Այսպես ուրեմն, եթե Ալեքսանդր Մեծի գերեզմանի խնդրով զբաղվող մասնագետների մի հավաքի ընթացքում Դանիելի խնդրով զբաղվող մասնագետին հարց տրվի այս երկու անձնավորությունների միջև եղած կապի մասին, անկասկած նա անմիջապես մեկ պատասխան կտա: Արդ, իսկապես, Դանիելի խնդրով զբաղվող ոչ մի մասնագետ ելուքը ջանք չի թափել նեբի Դանիելի դադարի լուսաբանելու ուղղությամբ: Հակառակ դեպքում ներքոհիշյալ տողերը տեղ կգտնեին Քոմ էլ-Դիկ մզկիթին վերաբերող բոլոր աշխատություններում:

«Եւ յարիցէ թագաւոր հոոր, եւ տիրեսցէ տէրութեամբ բազմաւ. եւ արասցէ ըստ կամս խրո: Եւ իբրեւ յարիցէ՝ թագաւորութիւն փշրեսցի, եւ բաժանեացի: Ի շորս հողմս երկնից. եւ ոչ ըստ վախճանի նորա, եւ ոչ ըստ տէրութեան նորա զոր տիրեաց. զի խլեսցի թագաւորութիւն նորա, եւ այլոց՝ թող զնոցայն» (Դանիել, XI, 3—4)⁶³:

Ների Դանիել մզկիթը Դանիելի մզկիթը չէ, այլ նրա մզկիթը, ում գալուստը հայտարարված էր Դանիելի մարգարեության մասին: Այս պնդումը Ալեքսանդրիայում նեբի Դանիել մզկիթի գոյության հավանական բացատրությունը կարող էր թվալ, սակայն իրականում ավելի շուտ սահմանում է այն մեխանիզմը, որը թույլ է տալիս տեսնել Դանիելի միավորումը Ալեքսանդրի հետ մահմեդական ավանդույթում: Այս վերջինում, «Daniel»-ը կամ ավելի ճիշտ «Danial»-ը ապագայի գուշակն է, որի հեղինակությամբ ողողված են աստղադիտական տոմարները, նկատենք՝ բավական համեստ մակարդակի.

«Հեն Դանիելը տեսնում է, որ իրեն վերագրում են ապոկալիպտիկ հատկություններ. նման կանխատեսումներ պարունակող մի գիրք հայտնաբերվում է այն դազաղի մեջ, որտեղ իբր գտնվում էր նրա աճյունը [...] Մահմեդական աղբյուրները, բացի Դանիելի գրքի XI գլխի մի աղավաղված մեկնաբանությունից, նաև մի քանի հավաստի մեջբերումներ են ավանդում»⁶⁴:

Այնուամենայնիվ, նեբի Դանիել մզկիթի գոյության բանալին մահմեդական լեզենդներում և ավանդություններում պետք է փնտրել: Շնորհիվ այս բանալու, պետք է գտնել այն վկայությունը, ըստ որի հուշակավոր մզկիթը ու միայն ճանապարհորդների կողմից նշված կառույցն է, այլև Սոմայի նախկին տեղանքին ուղղահայաց կանգնեցված շինությունը:

«Թագերի Գիրքը» անկասկած նեբի Դանիելի գաղտնիքի բանալին է: Այն գրվել է մ. թ. 833-ից առաջ Աբդ ալ-Մալիք Իբն Հիշամի կողմից, որը հատուկ է իր «Սիրալով» կամ Մուհամմեդի կենսագրությամբ: Սա հենց այն ժամանակաշրջանն է, երբ սպարել է Իբն Աբդ ալ-Հաքամը, որը ծնվել է 798/9 թ. և մահաճանվել 871 թ.: Նա հիմնարկյալն ծագում ունեցող մի քննարկի հետևորդ է, որը գաղթել էր Բասրայից, իսկ Իբն Հիշամը ծնվել էր Եգիպտոսում. ուր և անդկատցրել էր ողջ կյանքը: Նրա գիրքը, որ գեղես թարգմանված չէ, հրատարակվել է 1928-ին Հայդարաբադում՝ Հնդկաստանում և նույն մակարդակի մրա է դնում Դանիելին, Զուլ Կառնեյնին և... Լուկմանին, որոնք ներկայացված են որպես մարգարեներ, այլ ոչ թե որպես պարզ առաքյալներ կամ միայն ներշնչված մարդիկ:

⁶³ A. Lacroix. Le Livre de Daniel. Commentaire de l'Ancien Testament, Paris, 1976.

⁶⁴ B. Lewis, Ch. Pellat, J. Schacht. Encyclopédie de l'Islam, II, 1977, p. 115.

«Թագերի Գիրքը» ամենաանսպասելի կապերն է վեր հանում, որ կարող էինք պատկերացնել: Հայտնի մասմեդական ավանդություններից ամենահինը մզկիթի ամենաքիչ հուշակ ունեցող անձնավորություններից մեկին՝ Լուկմանին, կապում է մեր ուսումնասիրության երկու կենտրոնական անձնավորությունների՝ Դանիելի և Զուլ Կառնայնի՝ այլ կերպ ասած Ալեքսանդրի հետ:

«Աբու Մուհամմադը ասել է. Ես մի խումբ գիտնականների եմ հանդիպել, որոնք ասում են, թե Լուկմանը, Զուլ-Կառնայնը և Դանիելը մարգարեներ են և ոչ պատգամախոսներ, ինչպես նաև մի ուրիշ խմբի, որոնք ասում են, թե նրանք Աստծո սպասավորներն են և առաքիլի մարդիկ: Միայն Աստծուն է հալանի այս ամենը»⁶⁵:

Ուստի Դանիելի և Լուկմանի ներկայությունը մզկիթի դամբարանում մեկ իմաստ ունի: Այս մարգարեները ուղեկցում էին Իրենց փոխանորդին (alter-ego) զեպի նրա գերեզմանի հնագույն (անտիկ) տեղը՝ Սումա, որի վայրը նրանք ընդգծում են: Այս ըուզակցումը մատնում է Դանիելի և Լուկմանի մահարձանների կամավոր տեղադրությունը (այնպես, ինչպես Թևոփիոսը տեղադրեց իր սրբերին) և սա զարմանալիորեն բացատրում է նաև նրանց շիրիմների առկայությունը Ալեքսանդրիայի կենտրոնում: Արդ, հնարավոր է հավատալ, որ այս հնագույն ավանդություններից մեկի համընկնելը պատմության մեջ ծանրաբեռնված վայրի հետ, պատասխանալիության արդյունք լինի: Հնարավոր է հավատալ, որ պատմական մեծություն ունեցող այս երեք մարգարեները երբեք միաձուլվել են մեկի մեջ և նույն տեղում: Իրականում, որը պատճառներ կան մտածելու, որ վաղուց արդեն Ալեքսանդրն այնտեղ չէ:

Պաշտոնապես, Հերոփոլիտոսի վկայությունը Կարակալայի այցելության մասին պատմական վերջին տեղեկությունն է, որը հնարավորություն է տալիս մոտենալու մակեդոնացի տիրակալի աճյունի խնդրի լուծմանը: Իրականում սա առաջիկա հայտնի վերջին տեղեկությունն է, որը արժանահավատ է, սակայն ամենևին էլ վերջին առերեսումը չէ կենդանի մարդու և այն հերոսի աճյունի միջև, որին պատմությունը պահպանում է իր տարեգրություններում: Գոյություն ունի մի այլ տեղեկություն, որին ծանոթ են եղել հին ժամանակների և ներկայիս որոշ հելլեններ, մինչդեռ նրանք, ովքեր զբաղվել են Ալեքսանդրի գերեզմանով, չեն իմացել այդ մասին: Քյուրցյանը, որին հայտնեցինք մեր ուսումնասիրության մասին, հիշեց սրբապատկերների կամ Հունաստանի եկեղեցիների որոշ որմնանկարների վրա արտահայտված մի բյուզանդական ամանդություն: Դրանցից մեկը դիտելով, մենք հասկացանք, որ այստեղ խոսքը գնում է մի ավանդության մասին, որն ինչքան մեզ հալանի է, երբևիցի վկայակոչվել Ալեքսանդրի գերեզմանի ուսումնասիրությունների շրջանակում (հնարավոր է, նշված աշխատությունների մեծ մասի վերջերս հրատարակված լինելու պատճառով): Այս ավանդությունը Եգիպտոսի անապատում Ալեքսանդր Մեծի աճյունի հայտնաբերումն է սուրբ Սիսոսի կողմից, որին կոչում են Մեծն Սիսոս: Որմնանկարներում ու սրբապատկերներում նրան խոնարհված ենք տեսնում Մակեդոնացու ոսկորներն ամփոփող զագազի վրա: Որպես սուրբ ներկայացված Սիսոսի պատկերի կողքին ասորի մեծ աստվածաբան Հովհաննես Դամասկացու (ծնվ. մ. թ մոտ 680 թ.) պոեմի ամբողջական կամ մասնակի արձանագրությունը կա:

«Սիսոսը՝ մեծը ասկետների մեջ, գտնվելով հույների թագավորի՝ Ալեքսանդրի գերեզմանի առջև, որը ժամանակին փայլել է՝ փառքի մեջ, սարսափած է ժամանակի անբարեհաճությունից, տխրում է անցողիկ փառքի համար և ահա արտասվում է»:

«Քեզ նայելով, գերեզման, Ես զարհուրած եմ:

Քեզ նայելով ես արցունքներ եմ թափում, որոնք ուղղակի իմ սրտից են հոսում,

քանի որ ես ըմբռնում եմ այն ընդհանուր պարտքը, որ մենք պետք է վճարենք:

⁶⁵ Ibn Hisham, 'Abd al-Malik, Kitab al Tiğān fi Mulūk Himyar [Livre de la Couronne sur les rois du Himyar]. Hyderabad, 1928, p. 70. Traduction M. G. Guedon.

Ի՞նչ ճանապարհով ես պետք է գնամ մինչև այդ վախճանը:

Այվա՛ղ, ալվա՛ղ, [գերեզման], ո՞վ կարող է քեզնից խուս տալ⁶⁶:

Քյուրցյանը և մենք կարողացանք նշմարել, որ շնայած ասկետների մեջ մեզ լինելու իր դամբարանին, Սիսոնսը զարմանալի ձևով բացակայում է Bibliotheca Hagiographica Graeca⁶⁷-ի՝ հույն սրբերի մասին սպառնչ նյութեր տրամադրող ցուցակից, բացակայում է նաև մասնագիտական հանրագիտարաններում և բառգրքերում: Ուստի թերթերով Կոստանդնուպոլսի Հայսմա-վուրքը՝ IX դարի բյուզանդական սրբերի վարքերը, ինչպես նաև տարբեր բուսամասերում թվանշաններ, ուր հանդիպում են նման սրբապատկերներ ու որմնանկարներ, ի վերջո պարզեցինք, որ սուրբ Սիսոնսը Արևելքի քրիստոնեական եկեղեցու մեծերից է եղել, մահացել է մ. թ. մոտ 429 թ. և ասկետական շափազանց խիստ կյանք է վարել եգիպտական անապատում: Այս անապատում է, որ Սիսոնսը մի օր հայտնաբերել է կմախք պարունակող մի բաց դագաղ, որն ըստ սարկոֆագի վրա: եղած արձանագրության՝ կարողացալ նույնացնել Ալեքսանդր Մեծի աճյունի հետ:

Ինչպես ասում են արվեստագետները⁶⁸, այս սրբապատկերի թեման, ըստ բյուզանդական ավանդույթի, մասկան շուրջ պտտվող ասկետիկ պատմությունների և այլաբանությունների շարքին է պատկանում: «Սուրբ Սիսոնսը սարկոֆագի առաջ» թեման տարածվել է 1453 թ. թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի դրավումից հետո՝ մասնավորապես կրիտական դպրոցի նկարիչների կողմից, որոնց ստեղծագործությունների մի քանի օրինակներ գտնվում են Աթենքի Բյուզանդական Թանգարանում և Andreades-ների հավաքածուում: Այս սրբապատկերների գերակշիռ մասն, ի դեպ, թվագրվում է XVI և XVII դարերով: Երանցից առավել նշանավորների մեջ է նկարիչ Դամասկինոսի սրբապատկերը, այն նախկինում Աթոս լեռան Լաուրայի վանքին կցակառույց սուրբ Նիկողայոս մատուռի սրբապատկերն էր, իսկ այժմ գտնվում է Վենետիկի Ս. Գեորգ եկեղեցում: Բացի նույն վանքում գտնվող տրիպտիկից, կանալեանեսի մի սրբապատկերը, որն այսօր պատկանում է Աթենքի Յակուբոզլու հավաքածուին և, վերջապես, մի ուրիշն էլ գտնվում է Ռուսաստանում՝ էրմիտաժ թանգարանում: Այս սրբապատկերները նպատակ ունենին վանականներին շարունակ հիշեցնել «հանգուցյալների հիշատակի» մասին, սա հույն-օրինորս ծեսի կարևոր դադափարներից մեկն է: Սա է պատճառը, որ այս սրբապատկերը սովորաբար հանդիպում է վանքերում, իսկ առավել ճշգրիտ՝ վանական դպրոցներում կամ սեղանատներում: Այն չափազանց տարածված էր Աթոս լեռան վրա, հատկապես Լաուրա վանքում, ուր այն վրձնվեց Թեոփանես Կրետացու կողմից, կամ Մետեորների վանքերում՝ նույնիսկ որմնանկարների ձևով:

Տեղեկանալով սրբապատկերային այս թեմայի առկայությունը, մենք սկսեցինք մտածել, թե արդյոք հնարավոր է որոշակի պատկերացում կազմել Սիսոնսի Եգիպտոսում կատարած երկարատև շրջագայության մասին: Եվ եթե Սիսոնսի իրիզալի արարքը նույնքան իրական է, որքան նրա գոյությունը, գուցե է կարողանանք առանձնացնել այն տարածքը, ուր վերջինս կարող էր տեսած լինել Մակեդոնացու աճյունը: Սիսոնսի կյանքի կարևորության գիտակցումը Քյուրցյանին և մեզ ստիպում էր բյուզանդական աղբյուրների հիման վրա աստիճանաբար վերականգնել այն: Մենք մտածեցինք, որ նման անձնավորությունը չէր կարող իր տեղը չունենալ դպրոցական ավանդության մեջ: Որոշ պրոպոսիտներից հետո, հայտնաբերեցինք, որ Ղպատական հանրագիտարանը Սիսոնսին ոչ միայն ծանոթագրություն է հատկացրել, այլև տեղեկություններ

⁶⁶ F. Kondoglu. Ekphrasis, I. Astir. Athenes, 1960, p. 398—7. Traduction de Georges Kiourtzian.

⁶⁷ F. Halikn. Bibliotheca Hagiographica Graeca, Bruxelles, 1957 (Societe des Bollandistes).

⁶⁸ M. Chatzidakis. Eikones tis kritikis texnis. Heraklion, 1993, p. 345—347.

է տալիս սրբի մասին, որոնք Apophthegmata Patrum-ից են քաղված⁶⁹։ Եգիպտական անապատի ղպտի հայրերի այս պատմությունը, հավանաբար լինելով V դարի գրվածք՝ հունարեն է թարգմանվել VI դարում։ Այս տեղեկություններն իրականում մատնանշում են այն տեղը, ուր սուրբ Սիսոսն ասկետր անց է կացրել իր կյանքի 72 տարիները՝ սկսած մ. թ. 356 թ.։ Սուրբ Անտոնիոսի լեռը այժմ հայտնի է «Deir Anba Antunius» անունով, այսինքն, «Սուրբ Անտոնիոսի վանք», որն այսօր, ինչպես և իր հիմնադրման ժամանակ՝ Հուլիանոս Ուրացոցի տիրակալության օրոք (361—363), գտնվում է Եգիպտոսի արևելյան անապատում, Կարմիր ծովից մոտ հիսուն կիլոմետր հեռավորության վրա և Ջալալահ լեռնաշղթայի հարավային ծայրի ստորոտում։

Երբ Անտոնիոսը հիմնադրեց վանքը, այն բաղկացած էր մի կեղեցիույց, մի քանի խցերից, խոհանոցից և հացատնից։ Apophtegmes-ները հայտնում են, որ Անտոնիոսի լեռը գնալուց առաջ Սիսոսն ասկետից Scetis-ում՝ Մակարոս Աթրիացու և Օգի հետ։ Նա Աբրահամի հետ լքեց այս ավելի ու ավելի բնակեցվող կենտրոնը՝ հիշյալ լեռը գնալու համար և վերադարձավ Կլիզմալում (Clysma) հաստատվելու իր կյանքի վերջում, մեծ հասակում՝ միշտ Աբրահամի ուղեկցությամբ։ Սուեզից մի քանի կիլոմետր դեպի հյուսիս գտնվող այս դաղաքում էլ նա մահացավ։ Նրա հեղինակությունն այնքան մեծ էր, որ Ադելֆիոսը՝ Նիլոպոլսի եպիսկոպոսը, նրա հետ խորհրդակցելու համար մինչև Անտոնիոսի լեռը ճամփորդեց։ Apophtegmes-ները մեզ թողել են նաև բաղմաթիվ ճանապարհորդների անուններ, որոնք Ս. Սիսոսնի կյանքի վերջում եկել են նրան այցելության Կլիզմալի նրա ապաստարանում։

Նկատենք, որ ժամանակաշրջանը, երբ Սիսոսն տեսել է Ալեքսանդրի աճյունը, ճշտորեն համընկնում է այն շրջանին, երբ հնագիտությունն ու պատմությունը արձանագրում են Սոմայի անհետացումը։ Այս զուգահեռությունը հավանական է դարձնում աճյունի առևանգման վարկածը Եգիպտոսի արևելյան անապատում՝ հավանաբար վանքի ստորգետնյա գերեզմանոցներից մեկում՝ այն պատասխարելու կամ թաքցնելու նպատակով։ Նման հավանականությունն պայմաններում հարկ է կրակացնել, որ աճյունն անապատում է գտնվում 356 թ. (երբ Սիսոսն բավականաչափ ծեր էր՝ արևելյան անապատի արահետներով դեպի Սուրբ Անտոնիոսի լեռը ճանապարհվելու համար) և 428 թ. (երբ նա այնտեղից հեռացավ) միջև։ Արդ, աճյունը մինչև Սուրբ Անտոնիոսի լեռը փոխադրելը, այդ որոշումը չէր կարող ընդունված լինել ո՛չ սրբի աղոթեղ գալուց առաջ՝ մոտ 216-ին և ո՛չ էլ նրա վախճանից հետո՝ 356-ի և 363-ի միջև, երբ սկզբնական շինությունները կառուցվել էին և վանքը ի միճակի էր ընդունելու մարմինը։ Այդուհանդերձ մեենևին էլ պարզ չէ, ընդամենը առասպել է սա, թե՞ ոչ։ Եվ եթե առասպել չէ, այլ իրական փաստ, մեենևին էլ հաստատ չէ, որ Ալեքսանդրի աճյունը դեռ այնտեղ է։ Այն կարող էր մեկ անգամ ևս փոխադրված լինել և թաքցված, ինչպես այս նույն վանքի վանականների կողմից 790-ական թթ. մինչև Ուադի Նատրոն վանքը փոխադրվեց։ Սուրբ Հովհաննես Կոլոբոսի մասունքները։

Եգիպտոսյան

Մինչդեռ քրիստոնեությունը զորանում էր Ալեքսանդրի քաղաքում, նրա աճյունը Սերապեոմի նման դառնում էր մի ողջ դարաշրջանի անհանգստացնող վկան և մանավանդ այն հավատքի, որից Պատրիարքներն աշխատում էին ազատելու 356 թ., նույն տարին, երբ մի աստվածահան մարդ Սիսոսն անունով, իր սպասափոր Աբրահամի հետ մագլցում էր Սուրբ Անտոնիոսի լեռը, հեթանոս Հերակլիոսը՝ ռադարի կոմսն ու կայսերական կառավարիչը, բնակչությանը հանում էր Աթանաս Պատրիարքի դեմ և այնպես էր անում, որ նրա Մեծ Եկեղեցու կահկարասին կրակի մատնվի։ 361-ին նոր Գևորգ Պատրիարքը վրեժխնդրության համար թույլ տվեց ավերել հեթանոսական սրբարանները և բազմաթիվ անտիկ շինություններ այդպիսով հանձնվեցին նրա կողմնակից-

⁶⁹ J. C. Gué. Les Apophtegmes des Peres. Sources chrétiennes, Paris, 1993, p. 387.

ների ամբոխին: Գևորգի թուլլատրած այս ավերածությունների ընթացքում, կամ նրա հաջորդ՝ Թեոփիլոսի գործունեության ժամանակ, որը հիմնահատակ ավերել տվեց մերապետումը, հնարավոր է, որ քրիստոնյաները դուրս բերեցին Ալեքսանդրի աճյունը գերեզմանատեղից, ապա ավերեցին Պտղոմեոս IV Ֆիլոպատոսի կողմից հինգ և կես դար առաջ կառուցված Սոման:

Հարգանքից կամ գուցե քաղաքական զրդապատճառներից ելնելով Պատրիարքները չհամարձակվեցին ոչնչացնել Ալեքսանդրի աճյունը և փոխադրեցին զեպի արևելյան անապատի ծայրամասերը՝ ապահով մի թաքստոց և աշխից հետո մի տեղ: Հնարավոր է, որ այս փոխադրության ժամանակ է Սիսոնսուր տեսել Մակեդոնացու արդևն շատ վնասված մարմինը: Դրանից էլ առաջացել է լեգենդը, որը հավանաբար արձանագրված է որևէ տեքստում և որը ներկ է գտնել ինչպես այդ հուշում է Կոստանդնուպոլսի կողմից, որը Սիսոնսուրն է, այլ ոչ թե Հովհան Դամասկացուն է վերագրում Ալեքսանդրի աճյունի մոտ կանգնած ասկետի կողքին գրված տողերը⁷⁰: Մի քանի տարի անց, 391-ին, Թեոփիլոսը վերջապես կայսրից հավանություն է ստանում հեթանոսության մյուս առավել ծանր հիշողությունը՝ Սերապետումը հողին հավասարեցնելու: Այս, կրոնափոխության գործը լիակատար դարձնելու համար, Թեոփիլոսը բազմաթիվ եկեղեցիներ է կառուցում հեթանոսական պաշտամունքի նախկին տեղերում և այդտեղ ամփոփում մեծ մարտիրոսների մարմինները, գուցե և կարծեցյալ մասունքները: Ինչպես կարևորության կարգով պարզորեն մատնանշում էր Հովհան Նիկեացին և անորոշ ձևով՝ Հայսմավուրքը, սուրբ Հովհաննես Մկրտչի մարմինը դրվում է Սերապետումի տեղանքում, որի պաշտամունքը իրական վտանգ էր համեմատած Պտղոմեոսների կամ նրանց հերոսի աճյունների պաշտամունքի հետ: Մինչդեռ ուրիշ սրբեր, հնարավոր է եղիան I. Եղիշեն, թաղվել են Սոմայի տարածքի վրա՝ փոխարինելու համար Ալեքսանդրին և Պտղոմեոսներին: Ուստի և Պատրիարքները պարծենում էին Սերապետումի ավերումով, ինչպես դա ցույց է տալիս Ալեքսանդրիական ժամանակագրությունը, բայց նույնը չի կատարվում Սոմայի հետ, քանի որ կատարյալ զաղախ է մնում այդ տեղն առաջինը զբաղեցնողի անձնավորությունը: Նուրբ Հովհաննես Ոսկեբերանը, որը չէր պատկանում Ալեքսանդրիայի պատրիարքությանը, IV դարի վերջում հարցրեց, թե որտեղ է գտնվում Սոման՝ ոչ թե նրա տեղն իմանալու, այլ փառագրկելու համար քրիստոնեության կողմից նրա համար կսնխորոշված ճակատագիրը և մատնանշելու, որ մարտիրոսների գերեզմաններն այսուհետ «փայլուն և շողշողուն են»⁷¹, լավ իմանալով, որ այս կառույցը ավերել էին իր իսկ կրոնակիցները:

Ամբից վերագրանալուց հետո, արաբները ծանոթացան այն տեղերին, ուր անտիկ ավանդությունները տեղադրում էին այն Ալեքսանդրի դամբարանները, որին իսլամական ավանդույթը արդեն Ղուրանի մեջ էր մտցրել «Ջուլ Կառնայն» կամ «Երկեղջուր» անվան տակ: Սոմայի գտնված տեղում, ներքի Դանիել փողոցի մերձավորությամբ, արաբները հայտնաբերեցին քրիստոնեական մի շինություն, ուր հնարավոր է, մի ժամանակ, III դարի դաժան ավերածություններից հետո ի մի են բերվել նվաճողի մասունքները: Եվ կամ ամենայն հավանականությամբ, այստեղ գրված են եղել մի քրիստոնյա սրբի մասունքները՝ այն նկատառումներով, որ մենք վերը վկայակոչեցինք: Այս հիշողությունն այնքան ուժեղ էր, որ VI և IX դարերի միջև ընկած ժամանակաշրջանում արաբները Սոմայի տեղանքը դարձյալ վերագրեցին Ալեքսանդրին՝ իր դուրանական՝ Ջուլ Կառնայն անվանումով: Իբն Աբդ ալ-Հարամը նշում է, որ այս կառույցը գտնվում էր քաղաքի դարպասի մոտ: Հետագայում, 1000 թ. ռիանց, արաբները Ջուլ Կառնայնի աղոթարանը վերածեցին մզկիթի: Նրանք կարծում էին, որ Ալեքսանդրի մարմինն այնտեղ է հանգչում և կամ քանի որ

⁷⁰ Codex 303. R. Stiche l. Studien zum verhältnis von text und bild spät- und nachbyzantinischer vergänglichkeitsdarstellungen.—Byzantina Vindobonensa, Bd. V, Ost. Ak. der W., Vienne, 1971, S. 93.

⁷¹ Patrologia Graeca 61. Sainl Jean Chrysostome, Homélie 26, p. 581/2.

Սոմալի գոյությունը մնում էր որպես առասպել, նրանք Սոմալի հետ կապեցին իրենց սեփական հանգուցյալներին: Դարեր անց մահմեդական ավանդույթը խառնաշփոխ հիշողություն էր պահպանել այս մարգարեի մասին, որին արդեն նախախաղածական առասպելի համաձայն՝ նույնացրել էր ալ-Խադիրի անձնավորության հետ: Այլ նախախաղածական ավանդություններ, ինչպիսին էր Դանիելի գիրքը, որը ավետում էր Ալեքսանդրի գալուստը, կամ Լուկամանի առակները, որոնց արմատները, հավանական է, մինչև անտիկ աշխարհն են խորանում՝ ավելացրին այդ խառնաշփոթ վիճակը: Ժողովրդական առասպելները, ի վերջո, միաձուլեցին Ալեքսանդրին և Դանիելին: Իսլամական ավանդությունը նույն մակարդակի վրա դրեց Զուլ Կառնային, Լուկամանին և Դանիելին՝ երեք մարգարեների, շիտակ ու հոգևոր անձանց, որոնց այդ ավանդույթը չէր կարողանում միասնականացնել սկսած IX դարից, ինչպես դա բացատրում է Լիբն Հիշամը իր «Թագերի գրքում»: Բնականաբար սկսեցին շիրմներ հորինել այս երկու անձնավորությունների համար, այն տեղում, որտեղ ավանդությունը տեղադրում էր երրորդին՝ Ալեքսանդրին: XV դարի վերջում մզկիթը նաև Դանիելին էր, որին հատկապես ժողովրդական առասպելներում, նույն այդ IX դարից սկսած, այլևս հնարավոր չէր տարբերել, քանի որ Մակեդոնացու նվաճումները վերագրվում էին նրա գալուստն ավետողին, ինչպես ցույց է տալիս Աբու Սալմալի և Ալ-Ֆարդանիի պատմած առասպելը: Ինչ վերաբերում է երկրորդ աղոթարանին, որը, գոնե նվազագույնը երկու աղոթարանների վկայությամբ գտնվելիս է եղել շուկայի մեջ, հավանաբար համարվում է անտիկ կառույցին, որի հետ նույնքան լեգենդներ ու ավանդություններ են կապված, որքան Նեբի Դանիել մզկիթի հետ: Մինչդեռ գտնվելով մարդաշատ վայրում, հակառակ Նեբի Դանիելի մզկիթի, որը մինչև 1850—1870 թթ. մեկուսացած մի վայրում էր, այս երկրորդ աղոթարանը ինչ-որ ժամանակ անհետացավ, ինչպես անտիկ շրջանի այն ավերակները, որոնց հետ նա պիտի որ զուգորդվեր: Մինչդեռ շատ հնարավոր է, որ ապագա որոշ պեղումներ կամ հատկապես որոշ տեքստեր բացահայտեն Միշմիշ էլ Բասալ («Mishmish el Basal») փողոցի տեղադրությունը կաթնեղենի վաճառանոցի թաղամասում, ուր հավանաբար գտնվում էր կառույցը:

Մոտ ապագայում, Ալեքսանդրի գերեզմանի տեղադրության խնդրի լուծումը իսկապես կիրականանա միայն այն դեպքում, երբ ուսումնասիրությունը սիստեմատիկ կերպով ընթանա: Այսինքն, երբ մենք համոզվենք, որ ոչ մի շիրմ պահված չէ Նեբի Դանիել մզկիթի դամբարանի (հատակի) տակ և երբ լիակատար պեղումներ իրականացվեն հնագետների կողմից, խիստ գիտական, ըստ ժամանակակից տեխնիկայի: Տվյալ դեպքում դարերով նվաճումներ են թարկված և թաղումներով լի շերտագրություն (ստրատիգրաֆիա) ունեցող այս տեղանքը, որ տակնուվրա է եղել, նույնքան դժվար ու անհարմար է պեղումներ կատարելու համար, որքան նախապատմական տեղանքը: Եւրոպացի պեղողները, որ այժմ արդեն մեկ դարից ավելի սպասվում են, թույլ կտան՝ էկզյումագիայի ենթարկել դամբարանի ոսկորները և Կարթոն 14 թվագրման տեխնիկայի օգտագործմամբ մարդաբանական խոր ուսումնասիրություն կատարել, իսկ ԴՆԹ-ի ձեռք բերումով գուցե հնարավոր կլիներ «հրաշքով» հաղորդակցվել այն մակեդոնացի Ֆիլիպի ԴՆԹ-ի հետ, որի աճյունն ըստ երկրաբանական պահանջներով է Սալոնիկում: Բացասական արդյունքի դեպքում, ուրեմն, ուսումնասիրությունները պետք է տարվեն մի ուղղությամբ, որը մեղ կառաջնորդի դեպի սուրբ Սիստեսի առասպելը, այսինքն աճյունի մնացորդներին՝ իրենց տեղից հանելը և դրանց մի այլ տեղ տեղափոխելը, հիպոթեզ, որը մեզ ամենահավանականն է թվում: Այդ դեպքում հարկավոր է աչքի առաջ ունենալ Սուրբ Անտոնիոսի վանքի տեղանքի գնումը, քանի որ հնարավոր է ապացուցել, որ մարմինը ոչնչացված է, ինչպես դա տեղի է ունեցել Հովհաննես Մկրտչի դեպքում՝ Հուլիանոս Ուրացուի հրամանով: Այս աշխատանքները շուտափույթ չկատարելու դեպքում, Նեբի Դանիելի և նրա շրջակայքի ուսում-

նասիրությունը իրականացնելու պատեճ ժամանակը աստիճանաբար կնվազի²։ Այնքան Դանիելի առեղծվածը կշարունակի ապրել. բայց գուցե այդժամ կմիանա այն սուրբ մարդու մարգարեությունը, որն իբր այնտեղ է բնակվում. «Եւ յարիցէ թագաւոր հզոր, եւ տիրեսցէ տէրութեամբ բազմաւ. եւ արասցէ ըստ կամա իւր: Եւ իբրեւ յարիցէ՝ թագաւորութիւն նորա փշրեսցի, եւ բաժանեսցի: Եւ շուրս հողմս երկնից. եւ ոչ ըստ վախճանի նորա, եւ ոչ ըստ տէրութեան նորա: Կոր տիրեսց. զի խլեսցի թագաւորութիւն նորա, եւ այլոց՝ թող զնոցայն» (Դանիել, XI, 3—4):

Այսպիսով, եզրակացնելով, Ալեքսանդրիայի ներքին Դանիել մզկիթի դամբարանում 1996 թ. մայիսին կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ էվարիստո հրեշիայի կողմից 1928 թ. նույն մզկիթում ի նրա շրջակայքում արված պեղումները ամենևին չեն հերքում ոչ Զողբերի և Թուսունի, այն տեսակետը, ըստ որի Դանիելի գերեզմանի մեջ է գտնվում նաև Ալեքսանդրի աճյունը, ոչ էլ այն, թե այդ մզկիթը կառուցված է Սոմային ուղղահայաց դիրքով: Այնուհետև բացատրում ենք Դանիել մարգարեի մզկիթի առկայության պատճառը Ալեքսանդրիայում, ինչպես նաև այն պատճառները, որոնք Ալեքսանդրին, արաբական ավանդության համաձայն, նույնացնում են Դանիելի հետ՝ Դանիելի Գրքի XI գլխի մարգարեության լույսի ներքո, Հաստատում ենք հիշյալ մզկիթի նկատմամբ Սոմայի ուղղահայաց գտնվելու մեջ հավանականությունը IX դարի արաբական մի ձեռագրի՝ «Քիթաբ ալ-Թիջանի» շնորհիվ, որը կապ է հաստատում Ղուրանի ավանդության երեք կրտսեր մարգարեների՝ Դանիելի, Զուլ Կոնայնի (Ալեքսանդր՝ Ղուրանում) և Լուկմանի միջև: Ներքին Դանիել մզկիթի տակ Դանիելի գերեզմանի հարևանությամբ այս նույն Լուկմանի գերեզմանի առկայությունը երբևէ ոչ բացատրվել է, ոչ իսկ նկատի է առնվել բացատրելու համար արաբական ժողովրդական այն ավանդությունը, որը Ալեքսանդրի գերեզմանը զետեղում է այս կառույցի ներքո: Ի վերջո կապ ենք հաստատում Ալեքսանդր Մեծի աճյունը հայտնաբերող սուրբ Սիսոնա Մեծի բյուզանդական ավանդության և V—VI դդ. անապատի եգիպտացի հայրերի (Apophtegmes) տեքստերի միջև: Այդ տեքստերը նշում են, որ այս եգիպտացի սուրբն իր կյանքի 72 տարիներն անց է կացրել Ս. Անտոնի վանքում՝ այն ժամանակաշրջանում, երբ Ալեքսանդրիայում պատմաբանների կարծիքով ավերվել է Ալեքսանդրի Սոման (IV դար): Ուստի ենթադրում ենք, որ հենց այդ ժամանակ էլ Ալեքսանդրի աճյունը հանվել է զերեղմանից, փոխադրվել հիշյալ վանքի շրջակայքը, որտեղ էլ այն տեսել է սուրբ Սիսոնը:

Ֆրանս. թարգմ. է. Խ. Քաջիրյան

Թարգմ. խմբ. Հ. Ն. Մկրտչյան

ЛОКАЛИЗАЦИЯ ГРОБНИЦЫ И ОСТАНКОВ АЛЕКСАНДРА ВЕЛИКОГО. НОВЫЕ ВЕРСИИ

КРИСТИАН ТЮТЮНДЖЯН ДЕ ВАРДАВАН (Париж)

Резюме

Исследования, проведенные в мае 1996 г. в гробнице мечети Неби Даниэл в Александрии (Египет), позволяют утверждать, что раскопки в той же мечети и ее окрестностях Эваристо Бреция (1928 г.) отнюдь не опровергают ни мнения Зограба и Тусуна о том, что в этой гробнице находятся также останки Александра Великого, ни то-

² 1994-ին վիկտոր Դաշևսկու կողմից հայտնաբերված ներքին Դանիել մզկիթից ոչ հեռու գտնվող փողոցը և հարակից շինությունները այժմ արդեն ծածկված են ժամանակակից կառույցներով:

го, что эта мечеть построена вертикально к Соме. Объясняется причина нахождения мечети пророка Даниила в Александрии, как и те причины, по которым, согласно арабским преданиям, Александра Великого отождествляют в свете пророчества 11-ой главы Книги Даниила с пророком Даниэлем. Достоверность нахождения мечети вертикально по отношению к Соме подтверждается арабской рукописью IX в. «Китаб ал Тиджан», которая устанавливает связь между тремя младшими пророками Корана—Даниэлом, Сул Каренном (в Коране—Александр) и Лукманом. Наличие могилы Лукмана по соседству с могилкой Даниила, находящейся под мечетью Неби Даниэл, никогда не только не объяснялось, но и не принималось во внимание для объяснения того народного арабского предания, которое указывает на нахождение гробницы Александра Великого под этой мечетью. Далее, установлена связь между византийским преданием о святом Сисоесе, нашедшем останки Александра Великого, и текстами египетских отцов-пустынников (Apophtegmes). Эти тексты показывают, что сей египетский святой 72 года своей жизни провел в монастыре Св. Антуана, в то время, когда в Александрии, по мнению историков, была разрушена Сома Александра Великого (IV в.). Поэтому выдвигается предположение, что именно в это время останки Александра Великого были изъяты из могилы и перенесены в окрестность упомянутого монастыря, где их и видел святой Сисоес.

A LOCALIZATION OF THE GRAVE AND REMAINS OF ALEXANDER THE GREAT: THE NEW VERSIONS

CHRISTIAN TUIUNDJIAN DE VARTAVAN (Paris)

S u m m a r y

Examination in May 1996 of the crypt of mosque Nebi Daniel in Alexandria (Egypt) enables the author to demonstrate that excavations led in 1928 by Evaristo Breccia in and around the same mosque do not refute in any way Zoghheb's and Toussoun's theory that Daniel's grave contains the remains of Alexander the Great, neither that this mosque is indeed built immediately over the Soma. The author then proceeds to explain why a mosque of prophet Daniel is to be found in Alexandria. He does so first by using chapter XI of the Book of Daniel which allow to explain the mechanisms which led Alexander to be assimilated to Daniel in the arabic traditions. He then confirms the strong probability that the Soma is indeed below mosque Nebi Daniel in the light of the Kitab al-Tidjan, an arabic manuscript of the ninth century, which clearly establishes a relation between three minor prophets of the coranic tradition: Daniel, Zul Qarnayn (Alexander the Great in the Coran) and Luqman. This Luqman whose grave may be seen today along Daniel's in the crypt of the mosque and whose presence, he points out, has neither ever been explained, nor ever taken into consideration to explain the popular tradition which places the tomb of Alexander in the crypt of mosque Nebi Daniel. Finally, the author establishes a new link between the Byzantine tradition of Saint Sisoës the Great, which reports that the latter saw the remains of Alexander the Great with his own eyes, and the writings of the Egyptian desert fathers (Apophtegmas) of the Vth and VIth century. These texts indicate that Saint Sisoës spent 72 years of his life in the monastery of Saint Anthony and at the very time when historians agree that the Soma of Alexandria was destroyed (IVth century). The author suggests that it is during that period that Alexander's body was drawn out of his grave, carried in the vicinity of Saint Anthony's monastery and seen by father Sisoës.